

Իրավապաշտպանություն

Չկա Հասարակություն
անտեղ իրավունքի
Ubi societas ibi ius

պ ա ռ Ե Ր ա թ Ե Ր թ
թիվ 3
2006 թվականի 29

Տարածվում է անվճար

ՀԱՐԳԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂ,

Թերթիս համարը լույս է տեսնում Սուրբ Ծննդյան տոնական օրերին:

Հարկ էր, որ ամանորյա, ասել է՝ տոնական տրամադրությունն իշխեր նրա էջերին: Այդպես չէ, սակայն, հարգելի՛ ընթերցող: Այդպես չէ ոչ միայն այն առերևույթ պատճառաբանությամբ, թե այս համարը հրապարակվում է համապատասխան հովանավորությամբ ու հատուկ ծրագրով՝ վեր հանելու աշխարհում ու մեր երկրում տիրող կաշառակերության, հովանավորչության, աղքատության խորքն ու չափը: Անկախ այդ ծրագրից էլ՝ «խնդալու... պատճառ, կարծեմ, չիք»:

Տոնականության կիսատուն հնչողություն ունի թերթի «Աննախաղեպ հաղթանակ» խորագիրը: Այո՛, մերօրյա կացության տրամաբանությամբ թերևս հաղթանակ պիտի համարել ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը (որի կայացմանը մեծապես նպաստեց նաև Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը)՝ ընդդեմ սոցիալական քարտերի պարտադրանքի և այդ պարտադրանքը վավերացնող օրենքի համապատասխան հոդվածների ու կետերի: Սակայն այս ի՛նչ անդնաչափ անկման ենք հասել, որ կարծես երկրն ընդհանրապես ինքնուրույն մեզ, թե ինչ նպատակով և ինչպես ընդունվեց այդ օրենքը՝ փոխարենը բերկրելով, թե՛ տեսեք-տեսեք, մեր հայրենիքի դատական բարձրագույն ատյանը պատմական որոշում կայացրեց: Այո՛, պատմական էր այդ որոշումը՝ հիշյալ դիմակիր քարտերից հրաժարվելու հետևանքով մեր տասնյակ արեւակիցների սովահարության ու սովամահության իրական պատմության սև դրոշմով...

Հիշում եմ՝ երկու-երեք տարի առաջ ուսուցիչների ու դպրոցական շենքերի «օպտիմալացման» աղմուկին քիչ մնաց կուլ գնար Հովի. Թումանյանի անվանակիր դպրոցը. անկախ Հայաստանի Լոռու մարզկենտրոնին շա՛տ էին համարում Մեծ լոռեցու անունը: Պայքարի գնով պահպանվեց «Թումանյան» անունը մեզանում, ուստի հետևությունն այն էր, թե... հաղթանակեցինք...

Ովքեր կարծում են, թե այսպիսի բաները պատահական են տեղի ունենում, ի՛նչ ասեմ, հազար՝ երանի:

Եթե եթերաժամը, հանդեսը, թերթը չեն ծառայելու մարդու հոգուն բարության լիցքերի հաղորդմանը, իզուր են գործում ու սփռվում դրանք, քանզի սև ու չար նպատակների են ծառայում:

Արդ՝ թերթի այս համարով մեր ուժերի ներածին չափ կարելից ենք բոլոր տնանկներին, աղքատներին, տարանուն դժբախտությունների տերերին, նաև բոլոր փխրուն հոգիներին: Այս ասելով՝ գիտակցում ենք նաև, որ ո՛չ մի դժբախտություն, ո՛չ մի աղքատություն չի փարատվի, մինչև չցրվի մեր երկրից **ոգու սովի** մթնոլորտը: Ուստի այս Նոր տարում ոգու հաղթություն ենք մաղթում մեր հայրենակերտ նվիրյալներին և քրիստոնեական ճշմարիտ հավատի հայրենադարձություն՝ հայրենի հողում ապրող ու այդ հողի ուժը չգիտցող հայրենաբնակ քաղաքացիներին...

Քրիստոս ծնաւ և հայտնեցաւ:
Օրհնեալ լեր Ծնունդն Քրիստոսի:

Այս դրյակները.
Աղբամանների աղբը քրքրող
Ծերի հանդիման
Լրբորեն կանգնած այս դրյակները.

Դրանք բոլորը դամբարաններ են
Դարերով տենչած մեր արդարության,
Մեր հազարաթև երազանքների,
Մեր հոգու լույսի,
Մեր մաքրամաքուր հավատի՛ վրա...

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Տե՛ս 6-րդ էջը



ՀԱՆՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԹՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ

Որոշակի ընդհատումից հետո 2006 թ. նոյեմբերին ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը վերսկսեց ՀՀ Կառավարության և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակի հետ համագործակցությամբ իրականացվող «Աջակցություն քաղաքացիական հասարակության հակակոռուպցիոն նախաձեռնություններին» ծրագիրը, որի նպատակն է բարելավել ՀՀ կառավարման կառույցների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ խթանելով քաղաքացիական հասարակության արդյունավետ մասնակցությունը Կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության ընթացքը դիտարկելու գործում:

Ընտրված հակակոռուպցիոն համայնքային խմբերը, փորձագիտական խմբի մշակած և ՀՀ Կառավարության հաստատած հակակոռուպցիոն մասնակցային դիտարկման մեթոդաբանության համապատասխան, առողջապա-

հության և կրթության ոլորտներում կիրականացնելու դիտարկում, որն ուղղված է կոռուպցիոն դրսևորումների դիտարկմանը և կոռուպցիոն ռիսկերի վերլուծության միջոցով առողջապահության ու կրթության ոլորտներում համակարգային փոփոխությունների նախաձեռնությանը:

2007 թ. ի հունվարից ծրագիրը կիրականացվի հանրապետության բոլոր մարզերում և մայրաքաղաքում՝ տեղական գործընկեր կազմակերպությունների համակարգմամբ:

Հակակոռուպցիոն մասնակցային դիտարկման մեթոդաբանության ընթացքի ամբողջական իրականացման նպատակով նախատեսված է անցկացնել հակակոռուպցիոն համայնքային խմբերի անդամների վերապատրաստում, որի ընթացքում համապարփակ իրազեկումներ կտրամադրվեն մեթոդաբանական գործիքների կիրառման, ոլորտներում տիրող ներկա վիճակի և առկա իմաստասիրների վերաբերյալ: Հակակոռուպցիոն համայնքային խմբե-

րի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պարբերաբար կանցկացվեն խմբերի անդամների փորձի փոխանակման ցանցային հանդիպումներ, որոնց ընթացքում տարբեր մարզերի համակարգողները և խմբերի անդամները կներկայացնեն դիտարկման գործընթացը, դժվարությունները և դրանց հարթահարմամբ ձեռք բերված փորձառությունը:

Անվիճելի է, որ կոռուպցիայի դեմ մղվող պայքարը նպատակային կլինի միայն այն դեպքում, երբ հասարակության լայն շերտերը, որոնք ամեն օր առնչվում են այդ երևույթին, փորձեն, իրենց իսկ շահերից ելնելով, իրազեկման, քաղաքացիական գործուն մասնակցության և այլ միջոցներով քայլեր կատարել՝ դիմակայելու կոռուպցիոն երևույթներին:

ԱՇՈՏ ՀԱՎՈՐՅԱՆ
Լոռու մարզում
ծրագրի համակարգող

ԱՆՆԱԽԱԳԵՊ ՀԱՂԹԱՆԱԿ

ՀՀ Սահմանադրական դատարանը (ՄԳ) 2006 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 649 որոշմամբ կենսաթոշակառուներ Մ. Քոչարյանի և Հ. Դավթյանի անհատական գործերով «Սոցիալական ապահովության քարտերի մասին» (ՄԱԶՍ) ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետը ճանաչեց Սահմանադրությանը հակասող և անվավեր: Ուժը կորցրած ճանաչվեցին նաև սոցքարտերը քաղաքացիներին պարտադրող բոլոր ենթաօրենսդրական ակտերը: Դա նշանակում է, որ սոցքարտերն այլևս կամավոր են և որևէ քաղաքացիաիրավական գործարքի համար անրաժեշտ չեն:

Վերջին երեք տարիներին սոցքարտերից հրաժարվող քաղաքացիների իրավունքների պաշտպանությամբ զբաղվում էր նաև Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը (ՀՄԻԿ):

Ստորև ներկայացնում ենք այդ աննախաղեպ հաղթանակի առթիվ ՀՄԻԿ նախագահ Գևորգ Մանուկյանի պաշտոնական գրությունը ՄԳ նախագահ Գագիկ Հարությունյանին և Գ. Մանուկյանի եզրափակիչ ելույթը Սահմանադրական դատարանում:

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ պարոն Գագիկ Հարությունյանին

Մեծարգո՝ պարոն Հարությունյան
Թույլ տվեք հազարավոր քաղաքացիների և ՀՄԻԿ նախագահության անունից մեր երախտագիտությունը հայտնել ՀՀ Սահմանադրական դատարանի բոլոր անդամներին և անձամբ Ձեզ Մանուկյան Բեջարյանի և Հրանուշ Դավթյանի անհատական գործերով 2006թ. հոկտեմբերի 4-ին կայացրած պատմական որոշման առթիվ:

Մարդիկ ցնծության և ուրախության մեջ են. մենք բազմաթիվ շնորհակալական նամակներ և զանգեր

ենք ստանում:
Ձեր որոշումը հայրենական արդարադատության վաղուց սպասված հաղթանակ է՝ ընդդեմ բռնության և անիրավության: Այն արթնացրեց քաղաքացիների հույսն ու հավատը՝ հանուն իրենց մարդկային Աստվածատուր իրավունքների պաշտպանության:

Խնդրում ենք մեր շնորհակալությունը փոխանցել Սահմանադրական դատարանի բոլոր անդամներին, ինչպես նաև աշխատակազմին:

Հարգանք՝
Գ. Մանուկյան
2006 թ. դեկտեմբերի 9

Շարունակությունը 2-րդ էջում ▶

« սկզբը 1-ին էջում

ԱՆՆԱԿԱԳԵՊ ԶԱՂԹԱՆԱԿ

ՅՍԻԿ նախագահ Վերոնիկա Մանուկյանի եզրակացնելիս էլույթը 33 Սահմանադրական դատարանում



Յարգելի՛ Բարձր դատարան, «Անենախիստ օրենքը մեծագույն անարդարություն է», - հռչակում է լատինական իրավական դարձվածքը: ՍԱԶՍ օրենքը և նրա 11-րդ հոդվածը հենց մեծագույն անարդարություն են, քանզի հակասում են Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների վերաբերյալ Սահմանադրության 2-րդ գլխին, ընդհանրապես արդարության հայեցակարգին և ծանր հետևանքներ են ունեցել: Մինչդեռ իրավունքը, օրենքը պետք է արդարության ու ճշմարտության արտացոլումը լինեն: Իրավունքի և օրենքի նկատմամբ ոտնձգությունը ամենամեծ չարքին է, որ կարելի է պատճառել երկրին ու ժողովրդին:

Պարզված հանգամանքներ.
1. Զննության ընթացքում բացահայտվեց ՍԱԶՍ օրենքի անհամապատասխանությունը ոչ միայն դիմումներում նշված 33 Սահմանադրության թվով յոթ՝ 3, 5 (2-րդ մաս), 6 (1-2-րդ մասեր), 26 (1-ին մաս), 27 (1-ին մաս), 37, 42 (1-2-րդ մասեր) հոդվածներին, այլ նաև 15-րդ, 31-րդ, 43-րդ և 44-րդ հոդվածներին և նույնիսկ օրենքի անվանմանը և նրա 5-րդ հոդվածով սահմանված նպատակներին, քանզի նպատակները համապատասխանում են այդ չարքաստիկ օրենքի սկզբնական անվանմանը՝ «Օրենք անհատական ծածկագրերի մասին», որը չորս անգամ փոփոխվեց՝ փորձելով սքողել, թողարկել նրա իրական եությունը: Օրենքի թերություններն արմատական, հիմնական են:

2. Հազարավոր մարդիկ, օգտվելով իրենց մարդկային անկապտելի՝ Սահմանադրությամբ ամրագրված սեփական կարծիքն ու համոզմունքն ունենալու իրավունքից, 20 միլիոն շարունակ մերժել են իրենց հրամցվող սոցիալական քարտեքը՝ նույնիսկ ենթարկվելով գրկաքննության, թերսման ու փաստացի սովամահության: Պետության արգելված է սահմանափակել այդ իրավունքները: Այդպիսի սահմանափակում պետությունը կարող է կիրառել միայն, «...եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար» (33 Սահմանադրություն, հոդ. 43): Անկասկած է, որ սոցիալական քարտեքից հրաժարվող քաղաքացիները նման վտանգներ չեն ներկայացնում:

3. Այս օրենքը կիրառվեց համատարած բռնություններով ու մարդկային իրավունքների խախտումներով: Անշուշտ, ցանկացած օրենք պետք է նախատեսվի նաև հարկադրանքի կիրառում այն խախտվելու դեպքում: Սովորաբար հարկադրանքի կիրառման անհրաժեշտություն հազվադեպ է ծագում: Բայց ՍԱԶՍ օրենքի դեպքում ոչ թե հարկադրանք,

այլ համատարած բռնություններ են կիրառվել և ամբողջ երկրում: Սա այն դեպքերից է, երբ որոշ մարդիկ կարծում են, թե իրենք իրավունք ունեն որոշելու այլոց, անգամ ամբողջ ժողովրդի փոխարեն: Անօրինակությունն ու իրավախախտումները եղել են այս օրենքի կիրառման սկզբունք և մեթոդ: Հարգարժան նախարարը գոհունակությամբ հայտարարեց, որ 2 միլիոն 550 հազար մարդ սոցիալական քարտ է վերցրել: Թույլ տվեց հայտարարել, որ դա իրականությանը չի համապատասխանում, քանզի նրանց մեծ մասը ոչ թե վերցրել, այլ բռնի համարակալվել է: Համատարած բռնությունների մասին վկայում են բազմաթիվ՝ մոտ հարյուր հազար ստորագրությունները, Ազգային ժողովի ընտրյալ 33 պատգամավորների ստորագրություններով դիմումը՝ ուղղված Սահմանադրական դատարանին, բազմաթիվ ցույցերը, բողոքները ամբողջ երկրով մեկ, բազմաթիվ նամակները, խնդրագրերը՝ ուղղված բոլոր առյուծների, վկա Անահիտ Թադևոսյանի ցուցմունքները: Կարևոր է հիշատակել նաև Մարդու իրավունքների առաջին պաշտպանի պաշտոնական գրությունը 33 նախագահին սոցիալական քարտերի մասին օրենքի հակասահմանադրականության վերաբերյալ, թեև այդ նամակին ընթացք չի տրվել:

4. Սոցալ նախարար Աղվան Կարդանյանին ուղղված իմ հարցի ժամանակ Դուք ինձ մեղադրեցիք հավատաքննություն կատարելու համար, մինչդեռ պարուն նախարարն իր պատասխաններով հոգևոր քարոզի դեր էր ստանձնել՝ փորձելով համոզել, որ հոգևոր հարցերը և կարելի է կարգավորել օրենքներով, ինչն էլ հենց կատարում են այդ հակասահմանադրական օրենքով: Ես պետք է ասեմ, որ դա, մեղմ ասած, անպարկեշտ վերաբերմունք է Սուրբ Գրքի նկատմամբ:

5. Անհիմն է ոմանց կողմից սոցքարտի և անձնագրի կամ այլ վկայականի միջև զուգահեռներ տանելը: Օրենքի 4-րդ հոդվածը պարզորոշ նշում է՝ «քարտի համարը եզակի է և փոփոխման ենթակա չէ»: ուրեմն այն կորցնելու դեպքում անձին տրվելու է նույն համարի քարտ, այսինքն՝ քարտը փոփոխական է, համարը՝ ոչ: Ոչ անձնագրի և ոչ էլ որևէ այլ վկայականի համարը եզակի չէ: Անձը և թիվը անփոփոխ են: Եզակի է անձը, եզակի է համարը, և քարտը՝ սոսկ միջոց, գործիք է օրենքի 5-րդ հոդվածով անթաքույց սահմանված նպատակի՝ համարի ու անձի նույնականացման համար: Հետևաբար ակնհայտ է, որ դա եզակի անձի անփոփոխ համարն է, որի միջոցով նույնականացվում է տվյալ անձը՝ եզակի անհատը, իր համարին:

Համակարգը ներդնողները նաև նախատեսել են 33 քաղաքացու անձնագրի երրորդ էջում անձնագրի համարից գատ միայն անգլերենով հատուկ անձի համարի նշում, և համապատասխան տող է նախատեսված՝ անձի համարը հետագայում լրացնելու համար:

6. Ի լրումն այս ամենի՝ ՍԱԶՍ օրենքը ուղղակիորեն հակասում է 33 օրենսդրության բաղկացուցիչ մաս կազմող մի ամբողջ շարք միջազգային պայմանագրերի, մասնավորապես «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» հոդված 18-ին, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագրի» հոդված 9-ին, «Կերականված եվրոպական սոցիալական հրովարտական» 4-րդ, 12-րդ հոդվածներին, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» սկզբունքներին:

7. Ես պետք է ուրախությամբ և գոհունակությամբ նշեմ պատասխանողի՝ Դ. Ազգային ժողովի պետաիրավական հանձնաժողովի նախագահ պարոն Ռաֆիկ Պետրոսյանի ազնիվ ու անկեղծ դիրքորոշումը քննարկվող հարցում և ընդունումը, որ, իրոք, սոցիալական քարտերի մասին օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետը հակասում է 33 Սահմանադրությանը:

Հարգելի՛ Բարձր դատարան, Մեզ մեծապես մտահոգում է, որ Սահմանադրությունը՝ որպես անմիջականորեն գործող փաստաթուղթ, գործադիր մարմինները և դատարանները չեն կիրառում: Նրանք գերադասում են գործադիրի, իրենց անմիջական ղեկավարի ենթաօրենսդրական, թեկուզ հակասահմանադրական հրամանները, հրահանգներն ու օրենսդրությունները, քան երկրի հիմնական օրենքը, քանի որ անմիջական ղեկավարը կարող է պաշտոնանկ անել, իսկ 3-ինական օրենքը՝ ոչ: Այսպիսի իրավիճակը ահազանգ է և անհանգստացնում է շարքային քաղաքացուն, քանի որ նրա իրավունքները վտանգված են դրանով:

ՍԱԶՍ օրենքի 11-րդ հոդվածի կիրառությունն ամեն օր նոր չարքներ է պատճառում՝ քաղաքացիներին:

Դիմող քաղաքացիների անուկից մենք ինդրում ենք՝

1. Սոցիալական քարտերի մասին 33 օրենքի հոդված 11-ի 2-րդ և 4-րդ կետերը ճանաչել 33 Սահմանադրությանը հակասող և անվավեր:

2. ՍԱԶՍ օրենքի հակասահմանադրական 11-րդ հոդվածի կիրառմանն ուղղված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ», «Աշխատանքային», «Մաքսային», «Քաղաքացիական դատավարության մասին» օրենսգրքերում, հարկային, բանկային օրենսդրությունների մեջ, «Քաղաքացիական մասին» և այլ օրենքներում ու համապատասխան ենթաօրենսդրական ակտերում կատարված բոլոր փոփոխությունները ճանաչել անվավեր՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 9-րդ կետի:

Մենք նաև ակնկալում ենք որ, իրավասու մարմինները կպարտավորվեն՝

3. Անհապաղ վճարել կատեգված աշխատավարձերը, կենսաթոշակները, փոխհատուցման գումարները, նպաստները:

4. Զարտերի վերադարձման հնարավորություն նախատեսել այն բոլոր քաղաքացիների համար, ովքեր պարտադրված են վերցրել դրանք:

5. Մահացած անձանց կենսաթոշակները և թաղման նպաստները վճարել նրանց հարազատներին:

6. Վերադարձնել սոցքարտ չունենալու պատճառով գործատուներից գանձված տուգանքները:

7. Բարձրացնել քաղաքացիներին և հանրապետությանը պատճառած վնասների համար մեղավոր պաշտոնյաներին պատասխանատվության կանչելու հարցը:

Շնորհակալություն ուշադրության համար:

Թող Աստված առաջնորդի ձեզ՝ արդարացի և ճշմարիտ որոշում կայացնելու համար:

2006 թ. հոկտեմբերի 3

ՁԵՌՔ ՄԵԿՆԵԼՈՒ ՓՈՒՍԱՐԵՆ...

Սեփական պետությունները «թերացողներ» են: Դպրոցական գեկույցը ցույց է տալիս, թե ինչպես են հարուստ երկրները խախտել աղքատ երեխաներին տված իրենց խոստումները:

Մեծ ութնյակի երկրները թերացել են ուղղել իրենց օգնությունը այլ երկրների աղքատ մարդկանց, որոնք միջնակարգ կրթության կարիք ունեն, և դրանով վտանգի են ենթարկում Հազարամյակի զարգացման նպատակների նվաճումը: Սա «Թերացողները» վերտառությամբ նոր գեկույցի եզրակացությունն է, որը իրատարակվել է «Համընդհանուր կրթության կրթության» քարտեքային կողմից Սինգապուրում կայացած հանդիպումների ժամանակ:

Չեկույցը կենտրոնանում է ոչ միայն օգնության ծավալների վրա՝ շեշտելով 2000 թ.-ից ստանձնած պարտավորությունները, այլ նաև օգնության որակի, որը երաշխավորում է, որ ի վերջո դրամը հասնում է նրանց, ովքեր դրա կարիքն ունեն:

Աղքատ երկրներում երիտասարդ աղջիկները պիտի հատուկ թիրախ խումբ լինեն որակյալ կրթության ապահովման համար, քանի որ ուղիղ կապ կա մի կողմից՝ աղջիկների դպրոց հաճախած տարիների, մյուս կողմից՝ հաջորդ տարիների ընթացքում նրանց անվտանգության և իր երեխաների առողջության միջև:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության 22 երկրների սանդղակում մեջ Գերմանիան, Ճապոնիան և Իտալիան ստանում են ապշեցուցիչ վերջին «7» աստիճանը՝ գրավելով համապատասխանաբար 14-րդ, 16-րդ և 17-րդ տեղերը: Իսկ Ամերիկան՝ աշխարհի ամենահարուստ երկիրը, Ավստրալիայի հետ հավասարապես գրավում է 20-րդ տեղը, որոնք երկուսն էլ վաստակում են «7» աստիճանը:

Մինչև ԱՄՆ յուրաքանչյուր քաղաքացի տարեկան նվիրաբերում է 1 ԱՄՆ դոլար՝ աղքատների կրթության համար, Նորվեգիայի քաղաքացիներից յուրաքանչյուրը նվիրաբերում է 15 ԱՄՆ դոլար:

Չեկույցից հետևում է, որ շատ քիչ դրամաբաշխ երկրներ են բավականաչափ օգնություն հատկացնում «Կրթություն բոլորի համար» արագ արձագանքման նախաձեռնությանը, որը հիմնվել է 2002 թ.-ին՝ երաշխավորելու, որ դրամաբաշխների հատկացումներն աճել և ուղղվել են այնտեղ, ուր կա դրանց անհրաժեշտությունը: Այս համաձայնագրով աշխարհի առաջնորդները ստանձնել են պարտավորություն՝ երաշխավորելու, որ ոչ մի աղքատ երկիր, որն ունի իր բոլոր երեխաներին կրթելու պատճառով, չի մահաբաժնի կատարելու սովորույթ: Սակայն արագ արձագանքման նախաձեռնությունը մտում է թերֆինանսավորված՝ անվազն 415 միլիոն ԱՄՆ դոլարի պակասորդով՝ նույնիսկ այն 20 փոքր երկրների համար, որոնց ծրագրերը հավանության են արժանացել:

Չեկույցում նշվում է, որ հաջորդ 2 տարիների ընթացքում արագ արձագանքման նախաձեռնությունը կարող էր օգնության ձեռք մեկնել 40 այլ երկրների, օգնել աշխարհի աղքատ

երեխաների 70%-ին, բայց դրամաբաշխների՝ մինչ այժմ օժանդակություն ցույց չտալու ջանքերը առահատեցնում են և խոչընդոտում ունաջնթացը:

«Առաջնորդները պետք է իրենց արդար ներդրումը կատարեն արագ արձագանքման նախաձեռնության համար. դա միակ ստույգ հնարավորությունն է այն 100 միլիոն երեխաներին տված խոստումը կատարելու համար, որոնք սպասում են դպրոցների դռների մոտ», - ասել է «Համընդհանուր կրթության» քարտեքային կողմից:

Չեկույցը նաև քննադատում է մյուս՝ ավելի փոքր, սակայն հարուստ երկրներին, ինչպիսիք են Ավստրիան, Իսպանիան, Ավստրալիան և Շվեյցարիան, արագ արձագանքման նախաձեռնությունները որևէ շոշափելի նվիրաբերություն չկատարելու համար: Մինչդեռ նրանք կարող էին լրացնել առկա ֆինանսական ճեղքվածքը՝ իրենց օգնությունն ավելացնելով 2006-ի 0.33%-ով և դրա միայն 7%-ը հատկացնելով աղքատ երկրների տարրական կրթությանը:

Նորվեգիան, Շվեդիան, Սիդեռլանդները և Դանիան սանդղակում վերին շարքում են, մինչդեռ Իռլանդիան և Լյուքսեմբուրգը հսկայական քայլեր են արել՝ իրենց օգնությունը ավելացնելու նպատակով:

Չեկույցը վստահության թվե է տալիս Միացյալ Թագավորությանը, որը 10 տարվա պլան է իրականացնում իր նպատակները:

«Սա կարող է արտառոց թվալ հարուստ երկրների քաղաքացիներին, բայց շատ աղքատ երկրներում իրավիճակն այլ է: Հաճախ դպրոցական չենքերի, դասագրքերի և գրիչների պակասի պատճառով երեխաները սովորում են դրսում, համապատասխան որակավորում չունեցող ուսուցիչների հսկողությամբ և իրենց դասարանային աշխատանքը կատարում են բառացիորեն ավազի վրա», - ասել է Գորգուի Սոուն՝ «Կրթություն բոլորին» աֆրիկյան ազգային քարտեքային կողմից:

Չեկույցում շեշտվում է այն փաստը, որ միայն 2 տարի է մտնում բոլոր երեխաներին դպրոց ուղարկելու համար, եթե, իհարկե, հազարամյակի զարգացման նպատակներն ունեն իրականանալու որևէ հնարավորություն:

«Յուրաքանչյուր տղայի և աղջկա համար պատշաճ կրթությունն ապահովելը հասնելի նպատակ է, բայց ոչ առանց հարուստ երկրների ջանքերի», - ասել է Լյուսիա Ֆրայդը՝ «Համընդհանուր կրթության» քարտեքային կողմից:

Չեկույցում նշվում է, որ հաջորդ 2 տարիների ընթացքում արագ արձագանքման նախաձեռնությունը կարող էր օգնության ձեռք մեկնել 40 այլ երկրների, օգնել աշխարհի աղքատ



մաս վերին շարքում են, մինչդեռ Իռլանդիան և Լյուքսեմբուրգը հսկայական քայլեր են արել՝ իրենց օգնությունը ավելացնելու նպատակով:

Չեկույցը վստահության թվե է տալիս Միացյալ Թագավորությանը, որը 10 տարվա պլան է իրականացնում իր նպատակները:

«Սա կարող է արտառոց թվալ հարուստ երկրների քաղաքացիներին, բայց շատ աղքատ երկրներում իրավիճակն այլ է: Հաճախ դպրոցական չենքերի, դասագրքերի և գրիչների պակասի պատճառով երեխաները սովորում են դրսում, համապատասխան որակավորում չունեցող ուսուցիչների հսկողությամբ և իրենց դասարանային աշխատանքը կատարում են բառացիորեն ավազի վրա», - ասել է Գորգուի Սոուն՝ «Կրթություն բոլորին» աֆրիկյան ազգային քարտեքային կողմից:

Չեկույցում շեշտվում է այն փաստը, որ միայն 2 տարի է մտնում բոլոր երեխաներին դպրոց ուղարկելու համար, եթե, իհարկե, հազարամյակի զարգացման նպատակներն ունեն իրականանալու որևէ հնարավորություն:

«Յուրաքանչյուր տղայի և աղջկա համար պատշաճ կրթությունն ապահովելը հասնելի նպատակ է, բայց ոչ առանց հարուստ երկրների ջանքերի», - ասել է Լյուսիա Ֆրայդը՝ «Համընդհանուր կրթության» քարտեքային կողմից:

Չեկույցում նշվում է, որ հաջորդ 2 տարիների ընթացքում արագ արձագանքման նախաձեռնությունը կարող էր օգնության ձեռք մեկնել 40 այլ երկրների, օգնել աշխարհի աղքատ

Մարդու իրավունքների կրթության երիտասարդական «ԿՈՂՄԱՑՈՒՅՑ» ձեռնարկը՝ հայերեն

2006 թ. դեկտեմբերի 11-ին Եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակում տեղի ունեցավ Մարդու իրավունքների կրթության երիտասարդական «Կողմացույց» ձեռնարկի հայերեն հրատարակության 2-րդ համաժողովը, որը կազմակերպել էին Եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակը և Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը (ՀՍԻԿ): Միջոցառմանը ներկա էին Երիտասարդության և սպորտի վարչության ղեկավար պ-ն Գի Միշել Բրանդտը, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների, արտասահմանյան երկրների դեսպանությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ՀՍԻԿ-ը, Եվրոպայի խորհրդից ստանալով ձեռնարկի հայերեն թարգմանության և հրատարակման բացառիկ իրավունքը, Եվրոպայի

խորհրդի և Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանատան օժանդակությամբ հաջողությամբ իրականացրեց ձեռնարկի թարգմանության և հրատարակման բոլոր աշխատանքները:

«Կողմացույց» Մարդու իրավունքների կրթության երիտասարդական ձեռնարկը այս ոլորտում իր ծավալով ու համընդգրկուն բնույթով աննախադեպ աշխատություն է և Երիտասարդությունների թվում ուղենշային դեր ունի:

Այլ լեզուներով կատարված թարգմանությունների շարքում ձեռնարկի հայերեն հրատարակությունը թվով 20-րդն է և մյուսներից շահեկանորեն տարբերվում է մի շարք առումներով: Երիտասարդության և սպորտի վարչության հետ համաձայնեցված՝ ձեռնարկում կատարվել են որոշ փոփոխություններ և նորացումներ, մասնավորապես՝ շատ տվյալներ բերված են 2005-2006 թթ. դրությամբ,



կատարվել են տեղայնացումներ, զետեղվել են հայկական (տեղական) իրազեկումներ, կայքէջեր:

ՎԵՐՍՏԻՆ ԶԱՐԱԲԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՐՅԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՀՍԻԿ ՓՈՒՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՅԻԿ ՊԱՊԻԿՅԱՆԸ

Ե՛րբ և ի՛նչու՞ սկսվեց սոցիալական քարտերը Հայաստանում ներդնելու դեմ պայքարը:

Ըստ երկրանյայտի պայքարը քարտերի դեմ սկսվեց այդ համակարգի ներդրման հենց սկզբնական փուլում՝ 2003 թ-ից, երբ ՀՀ Կառավարությունը և Աժ-ն ընդունեցին մի շարք իրավական ակտեր, որոնք հետագայում Սահմանադրական դատարանի (ՍԴ) որոշմամբ ճանաչվեցին հակասահմանադրական, քանի որ դրանցով խախտվում էին մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքները: Համակարգի ներդրման հենց սկզբնական փուլում իրենց բողոքի ձայնը բարձրացրին հազարավոր անհատներ, սակայն իշխանությունները, մասնավորապես՝ Կառավարությունը, միջոցներ չձեռնարկեցին այդ մարդկանց խախտված իրավունքները վերականգնելու համար:



Պետական պաշտոնյաներն ինչպե՞ս էին հիմնավորում սոցիալական քարտերի ներդրման անհրաժեշտությունը:

Սոցիալական քարտերն իրոք պարտադրվում էին: Մխաված չեմ լինի, եթե ասեմ, որ ողջ համակարգը բռնությամբ էր ներդրվում: Ամենաշահագրգիռ կառույցն աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է, որն ամեն ինչ անում էր՝ նույնիսկ թույլ տալով բազմաթիվ օրենքների և իրավական ակտերի խախտումներ՝ հանուն համակարգի ներդրման:

Հիմնական հիմնավորումն այն էր, թե դրանով փորձում են կարգավորել քաղաքացիների հետ ունեցած հարաբերությունները սոցիալական ոլորտում, բարելավել մարդկանց սոցիալական վիճակը: Համակարգի ներդրման սկզբից մինչ օրս դրանում արձանագրված բազմաթիվ խախտումները ցույց տվեցին, որ կամ ներդրման ջատագովներն իրենք էին մոլորության մեջ, կամ փորձում էին մոլորեցնել ազգաբնակչությանը, քանի որ 4 տարվա ընթացքում սոցիալական վիճակը գրեթե չբարելավվեց:

Հիշում եմ, թե քաղաքաշինչի ընթացքում ինչպես էին աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, Կառավարության այլ անդամներ ու Ազգային ժողովի որոշ պատգամավորներ ներկայացնում այն «պայծառ ապագան», որը սպասում է ժողովրդին քարտային համակարգի ներդրումից հետո: Սակայն, ինչպես ցույց տվեցին այս 4 տարիների իրադարձությունները, իրականում սոցիալական համակարգում համակարգում որևէ բարելավում, դրական փոփոխություն չի նկատվել քարտերի ներդրումից հետո:

Հայտնի է, որ քարտերի ներդրման ընթացքում յուրաքանչյուր անհատի անձնական տվյալները կենտրոնացվել են: Ինչպե՞ս պետք է տնօրինվի տվյալների այդ հսկայական պաշարը քարտերի պարտադիր կիրառումը ՍԴ որոշմամբ վերացնելուց հետո:

Անհատական տվյալները կուտակվում էին կառավարական համակարգում գործող լիազոր մարմիններում, այնուհետև կենտրոնացվում «Նորք» (սկզբնապես կոչվում էր «Նեմ-րուբ») տեղեկատվական կենտրոնում, որն ինքնին հակաիրավական է: Համաձայն քաղաքաշինչի կազմակերպիչների և իրականացնողների՝ պետք է կենտրոնացվեին միայն սոցիալական տվյալները: Սակայն հենց սկզբից հայտնի դարձավ, որ դա այդպես չէ: Դա պատճառ դարձավ «Անհատական տվյալների մասին» օրենքում փոփոխությունների կատարման: Սկզբում այդ քարտերը կոչվում էին անհատական, ավելի ուշ կոչվեցին սոցիալական: Վերանվանումը կատարվեց ցատու-նային իրավիճակը մեղմելու և երևույթի դեմ պայքարող հազարավոր անհատներին հանգստացնելու կամ գուցե «մոլորեցնելու» համար: Այնուհանդերձ Կառավարությանը բռնությամբ հաջողվեց համակարգը ներդնել՝ անհատական տվյալները հարկադրաբար հավաքելով և կենտրոնացնելով մեկ տեղում:

ՍԴ-ի 649-րդ որոշմամբ նախատեսված է արդյոք պատասխանատվություն բռնություն գործադրած պաշտոնյաների և իրավաբանական անձանց նկատմամբ:

ՍԴ-ի որոշմամբ որևէ պատասխանատվություն նախատեսված չէ և չէր էլ կարող լինել, քանի որ դա ՍԴ-ի խնդիրն էր: Բացի այդ՝ ներկայացված դիմումում ընդամենը նշված էր, որ «Սոցքարտերի մասին օրենքի» 11-րդ հոդվածի 2-րդ կետը ճանաչվի անվավեր, որը և տեղի ունեցավ: Ավելին, ՍԴ-ի որոշմամբ իրավական ուժը կորցրած ճանաչվեցին վերոհիշյալ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներն ապահովող մյուս բոլոր իրավական ակտերը: Սա նույնպես շատ կարևոր էր: Այդ որոշումը տարածվում է նաև դրան նախորդող այն բոլոր իրավափորձերի վրա, որոնք ներառում են 2005 թ. հունվարից ցայսօր ընկած ժամանակահատվածը:

Քարտերից հրաժարվող քաղաքացիներն ինչպե՞ս կարող են դրանք վերադարձնել:

Ներկայումս քարտերից հրաժարվող քաղաքացիներին օգնելու նպատակով դիմումի համապատասխան ձև ենք, պատրաստել, որով քաղաքացին, քարտը վերադարձնելով, պահանջում է իր վերաբերյալ կուտակած անհատական տվյալները ղեկնացնել և այդ մասին գրավոր տեղեկացնել իրեն: Սակայն մենք չենք կարող վստահ լինել, որ դրանք իսկապես կոչնչացվեն: Ամենացավալին և վտանգավորն այն է, որ քաղաքացիների վերաբերյալ կուտակած ողջ տեղեկատվությունը, որը կենտրոնացված է մի տեղում, հայտնվելով ինչ-որ անհատի կամ մի քանի անձանց ձեռքերում, կարող է օգտագործվել ոչ բարի նպատակներով: Ոչ ոք չի կարող երաշխավորել, որ այդ տվյալների անվտանգությունն ապահովված է:

Բավական է, որ քաղաքացին իր քարտը վերադարձնի այն լիազոր մարմին, որտեղից ինքը ստացել է, իսկ լիազոր մարմինը պարտավոր է վերցնել այն՝ առանց որևէ առարկության: Որոշ քաղաքացիներ դիմել են մեր կենտրոն: Ցանկացողները կարող են իրենց սոցիալական քարտերը թողնել մեզ մոտ դիմումի հետ միասին, և մենք դրանք կփոխանցենք համապատասխան մարմիններին:

հարցազրույց՝
ՆԱԻՐԱ ՊԵՊՆՅԱՆԻ

Կաշառակերության մշտարթուն ուրվականը

Համոզված ենք, որ ոչ մի պատմաբան որոշակիորեն չի կարող ասել, թե երբ է առաջացել մարդկության մեծագույն ախտերից այն մեկը, որը կոչվում է կաշառակերություն: Ենթադրելի է, սակայն, որ այդ երևույթը սկզբնավորվել է պետական կառավարման կառույցների ձևավորմանը զուգահեռ, այսինքն՝ երբ առաջացավ պաշտոնի հասկացությունը, որովհետև չկար (ի սկզբնապես) կաշառակերություն:

Ի՞նչ է կաշառակերությունը, որ չարորակ ուռուցքի պես տարածվում է ամենուր և ախտահարում շատերին: Այն պաշտոնատար անձի իրավունքների չարաշահումն է անձնական շահի և հարստացման նպատակով: Նրա ծախվածությունն է, դավաճանությունը՝ ի պաշտոնն ունեցած իր իրավունքներին և պարտականություններին, այն գործին, որ իրեն է վստահել ժողովուրդը, ասել է՝ ուրանալ և սեփական ժողովուրդին:

Պարզ է, որ երբ երկրում ամկա ողջ հարստության գերակշիռ մասը, որ պիտի պատկաներ ժողովրդին, կաշառքի ձևով անցնում է նրա փոքրաթիվ անդամներին՝ պաշտոնատար անձանց, հոծ գանգվածները կմնան աղքատ: Հետևապես «կաշառք» արտահայտությունը մի կողմից՝ կարող է հոմանիշ լինել հարստությանը՝ պաշտոնյաների համար, մյուս կողմից՝ աղքատությանը՝ հոծ գանգվածների համար:

Կաշառքի երևույթի մասին ժամանակին գրել է պատմահայր Խորենացին: Իր Նշանավոր «Ողբում» հայոց պետականության կործանման պատճառների մեջ նա տեսնում է նաև պետական այրերի դավաճանությունը, կաշառակերությունը, ապաշնորհությունը: Ահա՛ «Ուսուցիչները... փողով ընտրված և ոչ Սուրբ Հոգով, ոսկետեր... և գալլ դարձած՝ հոշոտում են իրենց հոտը: Կաշառակեր են իշխանները, դատավորները, հոգևոր պետերը, որոնց մեջ բացակայում է «սերն ու ամոթը»: Այս ամենի հետևանքով «անթիվ նեղություններ են կրում ռամիկները»: Պատմահայրը կարծես մե՛ր օրերի համար է գրել: Այդ «ռամիկները», չհանդուրժելով այդքան լլկանքներ, ողջ միջնադարում պայքարել են իրենց հարստահարողների դեմ՝ շատ դեպքերում այդ պայքարին տալով աղանդավորական բնույթ և երանգ: Դրա վկայությունն են պատմիչների կողմից հիշատակվող անապատականների (IV-V դարեր), բորբորիտների (V դար), պավլիկյանների (V-XII դարեր), թոնդրակյանների (IX-XI դարեր) և այլ շարժումները:

Մխիթար Գռչի «Դատաստանագիրքը» (12-րդ դարի վերջ) նպատակ ուներ զսպելու ավատատերերի կամայականություններն ու ապօրինությունները և օրենքի ուժով կարգավորելու հասարակական ու մարդկային հարաբերությունները: Նա մարդասեր էր, համակրում էր աղքատ և ճնշված խավերին, ամեն կերպ պաշտպանում նրանց: Հորդորում էր հզորներին՝ չհարստահարել, չնեղել որբին և աղքատին, պահանջում էր չափավոր հարկեր և տուրքեր սահմանել, աշխատավորին տալ իրեն հասանելի վարձատրությունը՝ բազմաթիվ տրամեր սահմանելով: Ի դեպ, «Դատաստանագրքում» առանձին հոդված կար հայի՝ իր երկրում իրեն լիիրավ տեր զգալու և այլազգիների նկատմամբ հարգալից լինելու վերաբերյալ:

Կաշառակերության դրսևորումները, ժողովրդի ծանր սոցիալական վիճակը իրենց արտացոլումն են գտել նաև գեղարվեստական գրականության մեջ: Գրչը իր բազմաթիվ առակներում այլաբանորեն մերկացրել է պաշտոնյաների կաշառակերությունն ու ընչաքաղցությունը: Իսկ ժամանակագրորեն նրան մոտ բանաստեղծներից Ֆրիկը ցավով է նշում հասարակության մեջ տեղի ունեցած սոցիալական խիստ բևեռացման իրողությունը, որի մեղավորը կաշառակերներն են, որոնք՝

Չիրենաց ծանիք են խիստ սրել.

Միս ու արինդ են ծարավել...

Հիրավի, կարծես այսօրվա համար է գրված, քանզի երկրի վրա տակավին դեգերում է կաշառակերության մշտարթուն ուրվականը...

ԿՈՐՅՈՒՆ ՍԱՆՈՒԿՅԱՆ

Սկիզբն իմաստությունների հիւնդն Աստուծոյ



Յարգելի պատասխանում է Հայ առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն, Վահագնի Սբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու հոգևոր հովիվ Տեր-Վահան քահանայ Ազարյանը:

Ի՞նչն էր պատճառը, որ Հայաստանում ներդրվեցին սոցիալական քարտեզը:

Բնական է, որ մեր պետությունը չի կարող դուրս մնալ «համընդհանրացում» կոչվող գործընթացից: Զարտերի ներդրումն այդ գործընթացի փոքր դրսևորումներից է, որոնք արտաքուստ պարզ և անվտանգ են թվում, բայց արմատները խորն են, ու հետևանքները՝ անբարի: Դրանցից չեն կարող խուսափել ո՛չ զարգացած և ո՛չ էլ զարգացող երկրները, մանավանդ որ ուժերի վերահասակորման գործընթացում մեծ տեղությունները փորձում են իշխել փոքրերին, դառնալ աշխարհի տիրակալը: Ենթադրելի է, որ նորամուծությունը մշակութային ասպարեզում, պատերազմները, քաղաքական գործողությունները, աղանդների մուտքը, աղքատների տվյալների կենտրոնացումը, օգնությունների բաշխումը, «բարեգթության աճը» և արհեստակարար անցումը նոր հասարակարգին վերը հիշատակած համընդհանրացման դրսևորումներից են:

Ինչպիսի՞ն էր եկեղեցու վերաբերմունքը:

Եկեղեցին այն կարծիքին է, թե դրանք մեզ համար ժամանակավրեպ են: Մեր երկիրը դեռ այնքան ուժեղ չէ, որ կարողանա իր քաղաքացուն պաշտպանել հնարավոր վտանգներից, քանի որ կուտակված անհատական տեղեկությունները կարող են օգտագործվել հանրապետության ներսում կամ նրանից դուրս շահագիտական կամ այլ

վնասակար նպատակներով: Ուստի քարտերի կիրառումը նման թույլ օրենսդրական դաշտ ունեցող երկրում պարզապես նպատակ ուներ ցույց տալ գերտերություններին, թե Հայաստանում պատվերը կատարված է, քարտերը կան, թեև չեն կիրառվել և դեռ երկար ժամանակ չեն էլ կիրառվի, քանի որ ձևավորված չէ դրանք գործի դնող հզոր համակարգը, որը պետական այրերի համար կարևոր չէր: Բացի այդ՝ նույնականացվում էին քարտի համարը և մարդը: Սա անընդունելի է մեր Եկեղեցու կողմից: Սակայն պաշտոնատար այրերն ամեն կերպ փորձում էին համոզել, որ դա անվտանգ արարք է և որևէ հետին նպատակ չունի, այսինքն՝ փափուկ բարձր դրվեց հոգևոր խորհրդի «գլխի տակ», և քարտերն այնուամենայնիվ գործածության մեջ դրվեցին, քանի որ մեր պետությունը փոքր է և հեշտությամբ «գլուխալիզացիայի ծեղրում» օգտագործվեց որպես փորձադաշտ: Եկեղեցու դիրքորոշմամբ դրանց մուտքը վաղաժամ է: Հենց առաջին ամիսներից ժողովուրդն էլ բացարձակապես չէր ընդունում: Տարբեր քաղաքներում բազմամարդ ցույցեր եղան, և մարդիկ ընդդիմանում էին անհատական տեղեկությունների կենտրոնացմանը և կուտակմանը:

Քարտերի ներդրման արտաքին նպատակը տեղեկությունները կենտրոնացնելը և դրամական միջոցները ճիշտ վերաբաշխելն էր, բայց մեծ ֆինանսների տերերից և գործարարներից շատերն այդպես էլ քարտեր չունեցան:

Այո՛, իշխանությունները պատճառաբանում էին, թե կատարվածը հանցագործներին և սովետային տնտեսությունը վարողներին բացահայտելու, աղքատության իրական մակարդակը պարզելու և կարիքավորներին՝ որպես իրական հասցեատերերի, նպաստով ապահովելու համար է: Հարուստները կարող էին մի քանի քարտեր ունենալ և դրանով հեշտությամբ դուրս մնալ պետական վերահսկողությունից ճիշտ այնպես, ինչպես հաճախ խուսափում էին՝ մի քանի անձնագիր ունենալով: Սա, իհարկե, երթադրում էմ: Չգիտեմ՝ կա՞ն նման մարդիկ, թե՛ ոչ: Շինծու է այն պատճառաբանությունը, թե քարտերը ներդրվում են հանուն աղքատների: Իրականում անձնական տեղեկություններն ամենաթանկն են, պետություններն ամեն ինչ տալիս են հետախուզության համար, քանի որ, եթե ունեն որևէ երկրի մասին ճշգրիտ տեղեկություններ, արդեն իսկ հաղթանակն ապահովված է: Թշնամուն կամ մրցակցին հաղթելու գրավականը նրան լավ ճանաչելն է:

1300-ից ավել մարդիկ շուրջ 20 ամիս չվճարվեցին տարբեր սկզբունքներով՝ նախ և առաջ պատճառաբանելով, որ չեն ուզում թիվ կրել, քանի որ դա բնորոշ է կենդանիներին, երբ գլխաբանակ են հաշվում, բայց ո՛չ երբեք բանական մարդուն: Դրանով չեն հարգում իրենց սահմանադրական իրավունքը՝ առողջ

ջության, օրենքով հասանելիք ստացվածքի, կրթության: Այնինչ քարտից հրաժարվելով՝ 3 հոգի մահացան, թեև իշխանություններն այլ կերպ էին պատճառաբանում կատարվածը: Իսկ ո՞վ է պատասխան տալու այդ հանցանքի՝ անտարբերության, անհոգության և ճնշման համար: Ուրեմն ոչ թե աղքատությունը վերանալ սկսեց, այլ իրավիճակն ավելի սրվեց, կաշառակերությունը ծաղկեց, բարոյական արժեքներն ավելի ոտնահարվեցին, կարևորվեցին որովայնն ու գրպանը, որը հակաքրիստոնեական է:

Որո՞նք են այն քրիստոնեական սկզբունքները, որոնցով հնարավոր լինի ընչազրկությունը գոնե մեղմել:

Աշխարհի արատներից մեկն աղքատությունն է, բայց մենք միշտ փորձում ենք հետևանքը դիտել որպես պատճառ և վախենում ենք խորանալ իրական պատճառի մեջ: Եթե հեթանոսաբար խորհենք և միայն մեր հոգսերով ապրենք՝ կարծելով, թե ուրիշի ցավն իմը չէ, և մեկին տրված է հարուստ լինել, մյուսին՝ ընչազուրկ, ոչ մի լավ բան չի լինի: Այդ իմաստով մեզանում վտանգվել է մարդկային հոգեբանությունը: Աղքատությունից են բխում անկրթությունը, մշակութային հետընթացը, ձևավորվում է նվաստացման պատրաստ մարդու տեսակը՝ սեփական արժանապատվության բացակայությամբ: Սրա հետևանքով կունենանք նվաստացող և տգետ մարդիկ, որը հարիր չէ քրիստոնեական համակարգին: Այս բոլորի պատճառը հոգևոր կրթության և դաստիարակության պակասն է և Աստծո երկյուղի բացակայությունը, քանի որ եթե ես քրիստոնյա չեմ, Աստծուց չեմ երկյուղում, կարող եմ հանգիստ կաշառք վերցնել, դատավոր լինել և արդարությունը շրջանցել, հարուստ լինել և հարստահարել, անհոգ լինել իմ ազգակցի և մերձավորի հանդեպ:

Հետևապես, չկա քաղաքականություն՝ առանց կրոնական մտածողության, չկա մշակույթ՝ առանց կրոնական մտածողության, քանի որ մարդը կրոնական էակ է:

Սողոմոն իմաստունն ասում է, թե իմաստությունն անգին գոհար է, և ինքն ամեն ինչ պետք է վաճառի ու տա իմաստությունը գնելու համար: Իմաստությունն ինքը Քրիստոսն է, որին հասնելու սկիզբը նրանից երկյուղն է և առաքինությամբ ապրելը: Հայերիս պատիվ չի բերում աղքատությունը, քանի որ այն պտուղն է անհոգության՝ հանդեպ մեր հայրերի թողած ժառանգությունը, սեփական հողակտորը և բարոյական արժեքները: Փոքրաթիվ ենք, և ցանկության դեպքում կարելի է մեր երկիրը մեկ շաբաթում ծաղկեցնել, եթե լցվենք Տիրոջ սրբարար երկյուղով, առանց որի գուր են մեր բոլոր ջանքերը, և գուր՝ քարոզչությունը: Սիրենք միմյանց, և աղքատությունը կնահանջի:

Հարցազրույցը՝ մեր թղթակցի

ՆՈՐ ՇԵՆԷ՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ



1 996 թվականին ՀՍԽՎ-ը, կարևորելով հասարակության մեջ Մարդու իրավունքների գաղափարների արմատավորումը, հիմնեց հասարակության իրավական դաստիարակության առաքելությունն ստանձնած կրթական հաստատություն՝ Մարդու իրավունքների հայկական դպրոցը (ՄԻՀԴ):

10 տարվա ընթացքում ՄԻՀԴ-ում սովորել է 453 մարդ հանրապետության բոլոր մարզերից: Շրջանավարտներ գերակշռող մասով հանրակրթական դպրոցի «Իրավունք» ուսումնական ոլորտի («Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն» և «Պետություն և իրավունք») ուսուցիչներ են: Դպրոցի շրջանավարտները շուրջ 350 ուսումնական հաստատություններում ուսուցել են ավելի քան 60000 ուսանողների և աշակերտների:

Մինչ այժմ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են վարձակալած տարածքներում, որը թույլ չի տալիս դպրոցին կիրառելու իր ողջ ներուժը և ընդլայնելու գործունեությունը: Անհրաժեշտ են շենքային պայմաններ: ՄԻՀԴ շենքի կառուցումը և գործունեության ընդլայնումը կհանգեցնեն ոչ միայն Հայաստանում, այլև տարածաշրջանում Մարդու իրավունքների գաղափարների արմատավորմանը, ժողովրդավարության գարգացման ու խաղաղություն բերող գործընթացների զգալի աճին:

Ինչպես արդեն հայտնել ենք, ՄԻՀԴ շենքի նախագծման մրցույթ էր հայտարարվել: Հարույնս այդ մրցույթի՝ ՀՍԽՎ նախագահության որոշմամբ շենքի կառուցման համար ընտրվել է մրցույթով երկրորդ տեղը զբաղեցրած ճարտարապետ Գագիկ Հայիսյանի ներկայացրած նախագիծը:

Դպրոցի շենքը նախատեսված է կառուցել Վանաձորի Տիգրան Մեծի 1 հասցեի տեղակայում:

ՄԻՀԴ կառուցմանը աջակցում են ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ պարոն Վալերի Տկաչուկը և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի տնօրեն, դեսպան պարոն Վալերի Պրյախինը: Իրենց աջակցությունն են հայտնել նաև Լոռու մարզպետ Արամ Զոհարյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը:

ՀՍԽՎ-ը շարունակում է Հայաստանում և տարածաշրջանում հասարակության իրավական մշակույթի գարգացման գործում անմիջական և կարևոր դեր ունեցող ՄԻՀԴ շենքի կառուցման աջակցներ փնտրել՝ հույս ունենալով, որ կգտնվեն կազմակերպություններ և/կամ անհատներ, ովքեր կարևորում են իրավապես գրագետ քաղաքացիներ ունենալը, որը ժողովրդավարական երկիր ունենալու առաջնային նախապայմաններից է:

ՄԻՀԴ-ի շենքի կառուցման համար դրամական նվիրատվություններ ստանալու նպատակով Հայկական Կանադայի մասնաճյուղում բացվել է հաշվեհամար (163138246612 AMD, 163138221805 EUR, 163138246604 USD):

ԱՆԱՊԱՏԱՆՈՒՄ Ե ԵՐՔԵՄՆԻ ԿԱՆԱԶ ՄՈՒՐԱԿԸ



մար, իսկ եղևնիները՝ Ամանորից առաջ: Եթե ուշադրություն դարձնենք սարալանջերին, որոշ մասերում կնկատենք երիտասարդ անտառի մոլեգին աճ: Դա հիմնականում բուսական աշխարհի բնական նորացում է:

Լինում են նաև անօրինական հողագավթումներ, որտեղից ծառերն արմատախիլ են արվում: Զոդատարածքները հետագայում ընդլայնվում են հարևան ծառերի հաշվին, իսկ այնուհետև տնկվում բոստանային մշակաբույսեր, որն էլ բուսականությամբ ծածկված հսկայական տարածքների կորստյան պատճառ է դառնում:

Բուսականությունը մեծապես պակասում է նաև անասնապահության պատճառով: Սակավացած անտառը հիմա այն տեղն է, ուր արածում են ընտանի կենդանիները:

1 988-ից սկսած՝ չափազանց հաճախորդ են հրդեհները Վանաձոր քաղաքի շուրջ, որոնց պատճառով արեգակը կարծես ծխի շերտով է պատվում: Կտրուկ նվազում է արեգակի լույսը (ուժը, զորությունը), որը հիշեցնում է արևի խավարում, բայց ծխի միջոցով: Զամուց թշվառ հրդեհն արագ տարածվում է՝ մի քանի րոպեում ընդգրկելով լանդշաֆտի (կանաչ տարածության) հեկտարներ, մոխրացնելով բուսական և կենդանական աշխարհը: Իսկ հետո դեռ երկար ծխում են ծառերի և թփերի մնացորդները՝ ամենուր մշահոտ տարածելով:

Յենց նույն տեղում, ուր բարբարոսական հատումներ էին կատարվում, որքան շատ բնափայտ կա թափված, որ շարունակում է փոշել, նեխել առ այսօր: Ոչ պակաս կարևոր ևս մի փաստ. շեռուցման վառարաններում և խորովածանոցներում այրվել և մինչև օրս էլ այրվում են ամենաարժեքավոր ծառատեսակները՝ կաղնին և հաճարենին: Բակերում կարելի է նկատել սղոցած ծառերի հարթ և առողջ բներ, որ նախատեսված են շեռուցման համար, իսկ հիվանդ և փտող ծառերն այդպես էլ մնում են անտառներում: Հավանաբար դեռ հիշում են, թե ինչպես Վանաձորում վերջին տարիներին ՄԱԿ-ի ֆինանսավորմամբ «Սուուդ աշխատանքի դիմաց» ծրագրի հիման վրա (UNWFP) կատարվեցին անտառների վերականգման մեծածավալ աշխատանքներ: Նկատի ունենանք, որ նախկին անտառի վերականգման համար 500 տարի է հարկավոր: Տնկվեցին հարյուրհազարավոր տնկիներ (շիվեր), և կարելի էր նկատել, որ նախկինում որոշ տեսակներ այդ վայրերում չէին աճում, ինչպես, օրինակ, կեղծ ակացիան: Քիչ գումարներ չեն ծախսվել այդ բարի գործի համար: Ծառատունկ արված վայրերի մեծ մասում հետագայում հրդեհներ տեղի ունեցան: Անտառատունկից մնացին շատ քիչ ծառեր, որոնք ևս ոչնչացման վտանգի տակ են: Նրանց մի մասը հատվում է բահի կոթ շինելու, մեծ մասը՝ սեփականության տարածքը ցանկապատելու հա-

Նիները: Վերջին տարիներին հարակից շրջանների բնակչությունը անտառային տարածքներում և դաշտերում ճյուղերից գետնափոր տնակներ է կառուցել, որոնք ծառայում են որպես խոզանոցներ: Խոզերն ամռանը սնունդ հայթայթելիս քանդում-փորում են հարյուրավոր հեկտար սևահող, որով ոչնչացնում են խոտածածկը՝ ստեղծելով բնահողի արագ ջրաքայքայման համար նպաստավոր պայմաններ:

Բուսական աշխարհն անդառնալիորեն վնասում են ծաղիկներ հավաքողները: Հաճախ կարելի է նկատել, որ գարնանը հավաքում են ծաղիկներ ավելի, քան կարող են տանել, որոնց մի մասը թափվում է ճանապարհին: Վանաձորի փողոցներում գարնանը հազարավոր ծաղիկներ են վաճառվում, այնինչ լեռնաշղթաների լանջերին գրեթե ծաղիկներ չկան, մանավանդ որ նրանց մեծ մասը սոխուկներով է հանվում: Իսկ հետո այդ ամենը թափվում է որպես սովորական աղբ: Դրանք հիմնականում հազվագյուտ, ոչնչացող տեսակներ են՝ Հայաստանի Կարմիր գրքում գրանցված: Ժամանակն է, որ բուսաբանները պատրաստեն անհետացող բուսատեսակների սև գիրքը...

Հիշում եմ իմ կյանքից մի դրվագ: Ես սովորում էի 5-րդ դասարանում: Համարում ունեցող մեր դպրոցում բուսաբանության դաս էր: Ուսուցչուհին առանձնահատուկ քնքշությամբ էր պատմում ծաղկի մասին, բացատրում նրա կառուցվածքը, վարսանդի և առեջների նշանակությունը...

Մի աշնանային կիրակի աշակերտներով աշխարհագրության և բուսաբանության ուսուցիչների հետ միասին մեկնեցինք արշավի մի շրջան, որ Զարանձավներ են կոչում: Այն հրաշալի բնաշխարհով մի վայր է: Հսկա ժայռեր, հաճախ կարմրամանուշակագույն՝ շնորհիվ հեմատիտ կոչվող ապարի: Երկրաբանական չափանիշներով ոչ վաղ անցյալում այստեղ բուռն գործընթացներ են տեղի ունեցել՝ ստորջրյա հրաբխային ժայթքումներ...

Անցնում են միլիոնավոր տարիներ,

ձևավորվում ժայռեր, ետ քաշվում ծովի ջրերը, առաջանում է բուսականություն...

Մենք մազվում էինք ժայռերի վրա՝ կառչելով գիհու թփուտներից, որոնք հաճախ կախված էին բեկորների վրա: Այդ ամենը ստեղծում էր աննկարագրելի մի տեսարան: Եվ ահա ետ ենք վերադառնում: Շրջակայքում մեծ քանակությամբ աստղածաղիկներ են աճում: Որոշ երեխաներ «գիտակներ», սկսեցին այրել դրանք, քանի որ ծաղիկներն այդ իրենց մեջ մեծ քանակությամբ բուսախեթ էին պարունակում և վառողի պես բռնկվում էին: Սա շարունակվում էր մեր ողջ երթուղու ընթացքում: Որքան էլ զարմանալի է, ուսուցիչները որևէ կերպ չէին արձագանքում:

Իսկ այսօր եթե քաղաքից նայենք Բազումի լեռնալանջերին, կնկատենք ծառերի փոքրիկ պուրակներ՝ ձորակներում ու հեղեղատներում ծվարած: Դրանք երբեմնի անտառների մնացորդներն են, որոնք աճում էին հարյուրավոր տարիներ առաջ: Վանաձորից ոչ հեռու՝ Արջուտ գյուղի հյուսիսային մասում, արդեն ոչինչ նույնիսկ չի ակնարկվում նախկին անտառի մասին:

Այն տարածքներում, որտեղ սուլֆիդային հանքանյութերը թթվեցման են ենթարկվել, կարելի է հանդիպել հնագույն ծառերի արմատային համակարգերի մնացորդների:

Երբեմն որոշ քաղաքացիներից կարելի է լսել, որ ձեռք են բերել հուլանդական ծաղիկներ: Իսկ գիտե՞ն արդյոք նրանք, որ Հոլանդիան աղքատիկ բուսական աշխարհի ունեցող երկիր է: Բայց հուլանդացիներն այնքան խելամիտ են, որ մեր կողմերից արտահանում են հազվագյուտ բույսեր, նույնիսկ տեղային տեսակները, որոնք հաճախ մենք ուղղակի ոչնչացնում ենք՝ քաղելով և թափելով: Իսկ, ա՛յ, հուլանդացիները, ստեղծելով նրանց համար բարենպաստ պայմաններ և դրանցից խառնածնածներ ստանալով, այնուհետև հենց մեզ էլ վաճառում են: Իսկ մենք ուրախանում ենք հուլանդական ծաղիկներով:

Երևան քաղաքում բացվել է բուսական թանգարան, որտեղ ցուցադրված են որսորդների կողմից սպանված հազվագյուտ կենդանիների խրտվի-

լակներ և որսորդական գնեքեր, որոնցով սպանել են նրանց: Կարծես թե՛ բնության թանգարանը ստեղծվել է բուսական աշխարհի ոչնչացման քարոզի և խրախուսանքի համար: Ուզում եմ հիշել Վիկտոր Աստաֆևի խոսքերը. «Չարհուրում եմ այն բանից, երբ մարդիկ սանձարձակորեն կրակում են թեկուզ գազանի կամ թռչունի վրա և հպանցիկ խաղով արյուն են հեղում: Չեն էլ գիտակցում, որ դադարելով արյունից վախենալ, չգերադասելով նրա կենդանի ու տաք վիճակը՝ իրենց համար աննկատ կերպով անցնում են այն ճակատագրական սահմանը, որից այն կողմ վերջանում է մարդը, և հեռավոր, քարանձավային սարսափով լեցուն ժամանակներից հառնում ու անթարթ հայացքով մեզ է նայում նախամարդու նեոդակատ, ժանիքավոր այլանդակ դեմքը»: Կարո՞ղ ենք արդյոք բնական մարդ կոչվել: Մակաբույծներ չե՞նք դառնում արդյոք մենք՝ բնության արտադրած թթվածինն ու կենսական բաղադրատարրերը վատնելով:

Օրգանական նյութերի կուտակումը երկրի վրա տևել է միլիոնավոր տարիներ, իսկ մեզ «հաջողվեց» յուրօրինակ Էկոհամակարգն այս կործանել ընդամենը մի քանի տարում:

Վերջին տարիներին հաճախակի են դարձել երաշտները, իսկ անապատներից քամին ավազահատիկներ է բերում, որոնք մեր բնակավայրը ծածկում են կեղտի շերտով: Չգացվում է անապատի շնչառությունը մոտիկից, որը հիմնականում մարդածին (անթրոպոգեն) գործունեության հետևանք է: Նմանատիպ անապատների տարածքը կազմում է մոլորակի 9.115.000 կմ² կամ ամբողջ ցամաքային մակերևույթի 6-7%-ը: Անապատացման գործընթացի արագությունը 7 կմ²/ժ է: Այսօր անապատացման վտանգի տակ է 30 մլն կմ² ցամաքային տարածություն (19%):

Իրավամբ, յուրաքանչյուրն ինքն է իր պարտքերը վճարում, բայց կան նաև ընդհանուր պարտքեր... բնության առաջ:

ՈԱՖԱՅԵԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ



Բազումի լեռնափեշերի անապատացող տարածք Արջուտ գյուղի մոտակայքում

ԹՈՂԵՔ ՈՐ ԽՈՍԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ



ՀԱՅՐԵՆԻԷ

Սիլվա Կապուտիկյանի հիշատակին

Քո ցողի համար, ամօրևի ու ձյան
Եվ քո աշխարհիկ անխռովության՝

Հար հրահրվող Հոգու եղեռնում
Բանաստեղծներդ խռով են մեռնում...

Եվ դո՛ւ ես միայն, ամեն ինչ Հայրենիք,
Ըստ ամենայնի նրանց ընթեռնում,-

Եվ հավատամքով հայրենակնիք
Հեռահաշտության եզրեր ընծեռնում:

ԳՐԱՅԱ ՍԱՐՈՒԽԱՆ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՄԱՅՐԸ

Վասպուրականի
զանգակատունը դողանջում է
ութանասունյոթն անգամ
լուր տալու հայ աշխարհին
թե Սիլվա Կապուտիկյանը
կին բանաստեղծների ռահվիրան՝
քնարը ձեռքին փոխադրվել է այլ տարածություն
և Տերյանի Զարեհի ու Խրիմյան Հայրիկի հետ
նախաճաշում է հիմա:
Մի տիտան շոգիացավ Երևանի
փողոցներից
բեմերից
շնչից
վիշտ ավելացնելով մեր սրտերում
արցունքի մեջ խտացնելով հուշերը հին:
Բայց մի՞թե... մի՞թե գնում են նրանք
ովքեր հարստացրել են գանձարանը մի ժողովրդի
ովքեր իրենց հոգին խոսք դարձրած
թողել են մեր մտքերում մեր զգացումներում...
Թե՛ շարքն են հարստացնում անմահների:
Վանա լիճը արտասվում է
և Արարատը գրկում է բանաստեղծուհուն
մինչ մենք ստորոտում
ցտեսության ծաղիկներ թափահարելով կրկնում ենք.
«Վասա բարով - սիրելիս:
Նորից հանդիպելու ենք իրար...
Մասա բարով»:

ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԻՐ ԼԻԱՐՅՈՒՆ ԳՈՅՈՒԹՅԱՄԲ

Հայկյան նետը՝ Բելին զգեստնող, սոսկ Նահապետի
աղիսի առժամյա ապահովության համար չի շառա-
չել. դարերի հանգրվաններից մեկում Մեսրոպի ու
Նրա կերտելիք այբուբենի ծննդյան նպատակապահու-
թյունն է ունեցել:

Հայկյան նետաշառաչ սլացքը հոգում՝ Մեսրոպը մեր
գիրը սոսկ մարդկային ցեղի մեր տեսակը կիրթ տեսնելու
մտահոգությամբ չի երկնել. երկունքն այդ՝ իր Մովսես աշ-
ակերտի ձեռքով արարված հայոց ողբառատ պատմու-
թյամբ հայապահպան բանաձևի արտածման նպատա-
կապահովությունն է ունեցել:

Ու երբ հայոց նետի շառաչին ու սլացքին և հայագիր
գործության անհաղորդ դները դարից դար թրատել են
մեզ, մեր լինելիության կերպը հաստող ճաք տված բա-
նաձևը հայոց մեծերը նրբախյուս նորոգումով ձեռքից ձեռք
են փոխանցել մերոք որպես տաճար ու խաչքար, մերոք որ-
պես բառեղեն քանդակ, մերոք որպես մանրանկար ու երկ-
նասահ մեղեդի և այդպես մոլորեցնելով՝ հուսահատ նա-
հանջի մատնել այս ամենի միասնական հեքը, հենքն ու
ակունքը տեսնելու և գիտակցելու անկար մոլագարնե-
րին: Եվ փոխանցել են մեծերը մեր՝ մեր կեցության սրբա-
զան գաղտնիքը, փոխանցել նվիրումով, «ոգու հատու-
մով, ջանքով վիթխարի», «իրար հույս տալով ու փոխ առ-
նելով հույսը իրարից» և ազգային ճակատագրի բեկում-
նային պահերին **հայոց մեծ ազգի** անուկից հոխորտացել՝
էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, կամ հոգեհանգստյան աղոթք
մրմնջացել **հազար հազարով** անշիրիմ նահատակներին՝
հայոց կանաչ լեռների հեռապատկերն աչքերում, կամ
բարակիրան Նարուհու հրեղեն ու անարվեստ նայվածը
կերտելիս՝ մարտահրավեր նետել ճակատագրին՝ **Ու թող**
գա՛, թե կա, ավելի՛ չար բոթ, կամ **մահախուճապ սերունդ-**
ներին ի լուր՝ **Ռավեննայում Արարատի ծեր կատարի** հա-
վերժությունը փաստել, կամ էլ այս բոլորը ներսում կու-
տակած՝ աղերսել՝ **Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից**
բացի...

Չարենցյան կամրջմամբ մեր հոգևոր բեռան ծանրու-
թյունը պատվով կրողներից մեկը եղավ 1919-ին հրաշքով
ծնունդ առած մի հայուհի: Թիկունքին՝ դարերով կուտակ-
ված մշակույթ, կողքին՝ ազնիվ սերնդակիցների աստղա-
բուլ՝ կապուտիկյանական վտառի քայլով եկավ՝ «մեր
լեզուն հատող շանթերը բեկելու», լսել տալու հայ պատա-
նուն մեր լեզվի՝ «անհուն մաքառումի գորավոր գրիկը» և
«հայկյան նետի սույլ ու շառաչը» նրանում: Եկավ՝ երկար
քայլեր ու մեր ջարդված քարավանների հետքով՝ աշխարհի
կաճաններում հյուսելով մեր ազգի խճանկարը՝ հոգու և
քարտեզի բազմերանգությունից, մինչև որ հասներ Մար-
գատե, ուր պիտի առարկայանանար մեր նոր ավաղելի
սկիզբը՝ «վերջին եղեռնի անվերջ կսկիծը»՝ իբրև ափի մեջ
նահատակաց փխրուն ոսկորների փոշիացող շոշափում...
Եկավ՝ արվեստով մատուցելու կնոջ արվեստավոր
մերկությունը՝ է՛ն գլխից պատնեշ դնելով մերօրյա ու գա-
լիք սեռաշեղ-պաթոլոգիկ կատաղեղների հեղեղի դեմ. հե-
ղեղ, որ շատ է նման դարոցներում չգիտես ինչպես փոր-
ծարկվող «Սեռական դաստիարակության այբբենարա-
նի» սանձարձակությանը և նո՛ւյն նպատակին է ծառա-
յում...

Ի՛նչ է պետք մեզ՝ մեր տրամախոս եությանը էլի՞ հայա-
կերպ մնալու և էլի՞ հազարամյակ գլորելու այս արևի
տակ. երևի 65 ու 88-ատիպ ժամանակներում հայ բանաս-
տեղծի ձայնը լսելու պատրաստ համազգային ոգի՞ չիա-
վանելով խլել արվեստագետից գերխիտ վերացականու-
թյան մենաշնորհը, մանավանդ երբ այդ արվեստագետ-
բանաստեղծն ինքն է խնդրո առարկան ու լուծման կա-
րոտ առարկայական խնդիրը հարուցում ազգի առաջ. չե՞
որ «նրանց է տրված բյուրերի բերտով ժայթջելու պարտ-
քը». այլապես արդյունքն այն է, ինչ կա՝ երկրավեր ու ազ-
գավեր, արծաթասեր ու կաշառաշաղախ ժամանակներ՝
«գլորալիզացիային ինտեգրող» գաղթամուղ ծրագրե-
րով...

Եվ այսօր իր «արտագնա կացությունից» մի նոր կա-
րոտով է դառնում նա մեզ՝ այլևս չհեռանալու մեր մշա-
կույթի տեսադաշտից, նա՛ հայոց բառ ու բանին և Տիրոջ
նախընտիր սրբազան լեռանը աղոթք մրմնջացող մեր
բանաստեղծուհին՝ քարը բառով, բառը տաղով, տաղը կո-
թողով, կոթողը մեղեդով ներանցված մեր դարավոր ոգու
թարգմանը: Գալիս է՝ իր հավատի քաջեռանդ հորդորով
գալիք հորեյանական դահլիճներում հոգս ցնդեցնելու,
հազարամյակներով ետ շարտելու մեզ համար դարերի
հեռանկարով նյութված դավազիր հայտերը...

Արդ՝ հարկ է, որ հե՛նց մեր ինքնապահպանության հա-
մար խորքով, խորքից գիտակցե՛ք անսանց արժեքների
ազնիվ սարսուռ պարզած մեր բանաստեղծուհու՝ ոչ
վաղ անցյալի լիարյուն գոյության թանկությունը մեզ հա-
մար և այդ պատմական գոյությունը կրողի՛ կապուտիկ-
յանական կերպարի անաղարտ փոխանցման կարևորու-
թյունը գալիքին. չե՞ որ նա էլ իր նախորդների նման կոչ-
ված էր՝ վերից հսկելու Հայոց հին տան ոգին, իրմով ներ-
դաշնելու նրա խռովքն ու անդորրը...

ԴԱԿԻԹ ԳՅՈՒԼՉԱՐՅԱՆ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՀՎԱՍԱՐՄՈՒԹՅՈՒՆ

Թե իմանա՞յիր՝

Ի՛նչ խռովահույզ ճամփաներով եմ տարել իմ սերը.
Երբ բվացել է՝ մարել են դարձիղ բոլոր լույսերը,
Խարխափել եմ ես անհայտության մեջ կեսգիշերային,
Բայց վար չե՛մ նետել իմ սրտի բեռը:
Իմ ամեն քայլին

Նոր գալթակողության առու է եղել,
Շամպայնի մնաց խշշացող, կանչող, արբեցնող առու,
Բայց ես թեքել եմ, թեքել է՛մ ճամփաս ու փայտել հեռու:
Միրել եմ նետել խոսքեր երկայրի,
Որ դիմացինին շփոթեցրել եմ, մտքերը շեղել,
Բայց և նույն պահին բեկել եմ, փոխել
Աչքերիս կանաչ ազդարյույսերը սրափ կարմիրի
Եվ փակել է՛ր բոլոր ճանապարհները:
Հավաքություններում ամենից գնում ե՛ս եմ ծիծաղել,
Ու երջանկության ծփանք են կարծել իմ երգն ու ձայնը.
Բայց երբ գիշերը

Ուղեկցողներին մնաս բարով եմ ասել խնդաղեմ
Ու տուն մտնելով՝ շրջել եմ դանդաղ դռան փականը,
Նույն բանալիով փակել եմ դռսի աշխա՛րհը իմ դեմ
Ու խոր հանձնվել իմ կարոտներին, իմ մեմորյա՛նը:
Քայլել եմ կյանքում մենակ ու համառ,
Հասնելու հույսով քայլել է՛մ նորից,
Թեև անհա՛յտ է եղել կայանը...

Մի՛ ժպտա այդպես.

Հավատարիմ եմ մնացել ես ի՛նձ,

Իմ հոգու լույսին, իմ էությանը,

Ի՛նձ և ո՛չ թե քեզ...

1960

ՀԻՆ ԿԱՐՈՏ

Երազ տեսա, ու երազում Վան էր ու Այգեստան,
Մեր խաչփողանն էր երևի, դուռը հայրենի տան,
Երբ ներս մտա, տեսա՛ կանգնել ծաղկաճերմակ այգում,
Հասակակից երեք աղջիկ քչփչում են թարուն.

Դալար-մալար երեք աղջիկ՝ երեք քույրերի պես.
Ես գլխի եմ ընկնում հանկարծ՝ տատս է, մայրս է ու ես:
Մասֆորի օթա՛խն է աա՛ գորգն յ, բարձն յ, քախտն յ,
Ներս ու դուրս են անում անվերջ կեսուր, կեսարյա, տագրեր,

Երեք օրոցք է օրորվում՝ նխա՛ն մանկիկներով,
Օրոցքի մոտ երեք հարսներ՝ աչքում ահ ու գորով,
Արամաղ-շարմաղ երեք հարսներ՝ դեռ չխտկան ու հեզ,

Եվ, ո՛վ կարմանք, մենք ենք նորից՝ տատս, մայրս ու ես:
Խոնկում է շուրջս մեկեն պայթյուն, իրարանցում,
Վանում կոխվ է, հրդեհներ, գոռ ֆանֆարն է կանչում,
Հոգնած ու հեզ երեք կանայք կրվին հաց են տանում,

Երեք կանայք գաղթի երթում հագվի քայլ են անում,
Երևանի պատերի մոտ կանգ են առնում կարծես,
Մի՛ հարցնեք, մենք ենք դարձյալ՝ տատս, մայրս ու ես:
Մի խեղճ տնակ Ամիրյանում ու գաղթական մի բակ,

Հետո՛ փարթամ մայրաքաղաք, բնակարան ու կայք,
Չորս բորբոլ՝ որդիք, թոռներ, իրենք՝ տարիքն առած,
Երեք կանայք չորբորդ հարկից՝ աչքը հեռուն հառած,
Դեռ մնում են դարձի ժամին ու մորմորում անտես,

Էլ ուրիշ ո՞վ, մենք ենք կրկին՝ տատս, մայրս ու ես:
Այսպես գալիս ու անցնում են օրեր ու տարիներ,
Հանգչում են մունջ երեք շիրիմ՝ նորքի բարձունքն ի վեր,
Հանգչում երեք այրված հոգի՛ խոր խռոված կյանքից,

Մահից հետո արդեն դարձած իրքը հասակակից,
Նույն խուլ բախտով աշխարհ եկած, նույն երազով անկեզ,
Նույն կարոտով իջած շիրիմ՝ տատս, մայրս ու ես...

1992

ՄԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ինձ միշտ թվում է՝ վերջին տաս տարվա
Իմ ապրած կյանքը սևագրություն է.
Խանգարված տողեր, քառյակներ անվարժ,
Խախտված է չափը, խեղված է հունը:

Խակ սևագրություն, որ հետո պիտի
Մաքրագրեմ, գտեմ, դուրս նետեմ թույլը.
Դուրս նետեմ ժամա, պահերս փնթի,
Մակերես ելած անմիտ փրփուրը:

Ամենն, ինչ դուրս է կյանքից իսկական,
Մին, ոտքի վրա ապրած օրերս,
Իզուր գործերս, իզուր խոսքերս,
Իզուր հույսերս, որ անհետ հանգան:

Բայց չե՛մ հասցնի, մոտ են վերջերը,
Ինչ որ գրած է՝ կմնա գրած:
Ափսո՛ս, որ կյանքիս վերջին էջերը
Մխիթեցի այսպես՝ սևագրի՛ սրա...

2002

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԿԱՆԵՐ ԼԻՆԵՆՈՒ ՅԱՄԱՐ ԶԵՆ

1 974 թ. հունիսի 8-ին Կիրովականում (այժմ՝ Վանաձոր) բացվեց Հայաստանի պետական պատկերասրահի մասնաճյուղը: 1979 թ.-ին այն վերակազմավորվեց որպես *ինքնուրույն կերպարվեստի թանգարան՝ քաղխորհրդի գործկոմի իրավասության ներքո: Արդեն 1997 թ.-ին թանգարանն անցավ Վանաձորի քաղաքապետարանի իրավասությանը:*

Կերպարվեստի թանգարանը Լոռու մարզի մշակութային կարևոր օջախներից է: Այստեղ ներկայացվում է թե՛ դասական, թե՛ ժամանակակից հայ կերպարվեստը: Թանգարանի ֆունդը ներառում են շուրջ 2000 ցուցանմուշ: Քանդակները և գծանկարները ցուցադրվում են առաջին հարկում: Վանաձորի նկարիչները ներկայացված են առանձին ցուցասրահով:

Ստեղծվելով որպես ազգային պատկերասրահի մասնաճյուղ՝

կերպարվեստի թանգարանը կարևոր նշանակություն է ունեցել Վանաձորի հոգևոր մշակութային կյանքում: Գաղտնիք չէ, որ հետերկրաշարժյան տարիներին ստեղծվել էր մի տեսակ «հոգևոր թմբիրի» ու վտանգավոր անտարբերության մթնոլորտ: Ներկայումս տեղական բյուջեի միջոցներով բարեկարգվել և գազաֆիկացվել է թանգարանը: Աշխատանքներ են կատարվել ցուցանմուշների անհրաժեշտ անվտանգության և դրանց պահպանման համար նպաստավոր կենսոլորտ ապահովելու ուղղությամբ:

Թանգարանն արդյունավետ համագործակցում է Հայաստանում գործող օտարերկրյա դեսպանատների, հասարակական կազմակերպությունների և այլ կառույցների, ինչպես նաև առանձին անհատների հետ. իրականացվում են տարաբնույթ միջոցառումներ:

Վերջերս այստեղ հյուրընկալվել էին «Նոյան տապալան» թերթի

(Մոսկվա) խմբագրի տեղակալ Ռոբերտ Բաբլոյանը, հյուրեր Ֆրանսիայից, Սան Ֆրանցիսկոյից թանգարանի բարեկամ Ռոջեր Ստրաուսը և ընկերների հետ, Հայաստանում Բուլղարիայի դեսպանը, Հնդկաստանի դեսպանի առաջին քարտուղարը և ուրիշներ:

Թանգարանի բարեկամների շարքն ավելանում է ոչ միայն Վանաձորում և հանրապետությունում, այլև արտերկրում՝ Սանկտ Պետերբուրգ, Սան Ֆրանցիսկո, Գլենդեյլ, Չիկագո և այլն: Սակարևոր է այնքանով, որ թանգարանը ոչ միայն բարեկարգվում է, այլև աստիճանաբար ճանաչում է ձեռք բերում այլ երկրներում:

Բոլորովին վերջերս քանդակի բաժնում, թանգարանի տնօրինության հետ նախապես ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Հովհ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի ռեժիսոր Ջանիկ Ավետիսյանը բեմադրեց Սամվել Չուլյանի «Թռչնաձուկը»:

Թանգարանում իրականացվող աշխատանքները գրավում են նաև միջազգային տարբեր կառույցների և կազմակերպությունների ուշադրությունը: Անցյալ տարի Վանաձորի կերպարվեստի թանգարանը երկու անգամ հրավիրվել է՝ մասնակցելու ՅՈՒՆԵՍԿՕ-ի կազմակերպած միջազգային սեմինար-դասընթացներին Թբիլիսիում և Սանկտ Պետերբուրգում: Այս դասընթացների հիմնական նպատակը, ըստ տնօրեն Փափագ Ալոյանի, այն էր, որ թանգարանները ոչ միայն պետք է մշակույթի և արվեստի պատ-



մության վկաներ լինեն, այլև պիտի ծառայեն՝ ի նպաստ աճող սերնդի գեղագիտական ճիշտ դաստիարակության, լինեն ուսումնական կենտրոններ և կարողանան օգտակար լինել հանրության լայն շերտերին:

Կերպարվեստի թանգարանի վերջին տարիների կենսագրության մեջ գնահատելի երևույթ են նվիրատվությունները. նրանց թիվն արդեն անցնում է քառասուկից: Թանգարանին նվիրատվություններ անում են ոչ միայն Հայաստանի, այլև սփյուռքի ճանաչված նկարիչներ:

Քաղաքի մշակութային կյանքն աշխուժացել է նաև այստեղ կազմակերպվող ցուցահանդեսների առումով: Բացվել են նկարիչներ **Անատոլի Ավետյանի, Զրառ Թաղևոսյանի, Գևորգ Սչեցու, Նիկոլ Աղաբաբյանի** և հանրապետությունում ու նրանից դուրս ճանաչում գտած շատ ու շատ արվեստագետների անհատական ու խմբային ցուցահանդեսներ: Այս տարին հատկանշական էր նրանով, որ առաջին ան-

գամ ցուցահանդես բացվեց նաև ձմռանը՝ նվիրված Գեորգի Թովմասյանի 70-ամյակին, իսկ ամռանը թանգարանում բացվեց աշխարհահռչակ աստղաֆիզիկոս **Գրիգոր Գուրզադյանի** գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը: Վերջերս **Վանաձորի օր** տոնակատարության առթիվ բացվեց «**Վանաձորյան ներկապակ**» խորագրով ցուցահանդես, որին ներկայացված էին ինքնատիպ ու հետաքրքիր աշխատանքներ:

Ցուցահանդեսներին, գիտական աշխատանքին, վերլուծական-լուսաբանող հոդվածներին զուգահեռ թանգարանում կատարվում են թարգմանություններ, կազմակերպվում սեմինարներ՝ նվիրված աշխարհահռչակ նկարիչների կյանքին ու գործունեությանը: Սեմինարների անցկացման համար թանգարանի տնօրինությունը հատուկ սեյսակալարան է առանձնացրել, որի նորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են:



«ԿԱՐՈՏԻՑ ՈՒ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՎԵՐ ԵՍ ՈՉԻՆՉ ԶԳԻՏԵՄ...»

Հայաստանում և նրա սահմաններից դուրս Գրիգոր Գուրզադյանը վաղուց մեծ հռչակ է վայելում իբրև աստղաֆիզիկոս: Նրա անվան հետ են կապված, մասնավորապես, «Օրիոն-1» և «Օրիոն-2» տիեզերական աստղադիտարանների ստեղծումը, հեռադիտակների, օպտիկական համակարգերի, ողջ համակարգի աշխատանքի սկզբունքի՝ տիեզերքում ինքնակառավարման բոլորովին նոր գաղափարի հղացումը:

Վանաձորի կերպարվեստի թանգարանում բացվել էր գիտնականի գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը: Իր կտավներում, ինչպես ինքն է նշում, «մեր երկիրն է, մեր աշխարհը, մեր լեռները բոսոր, լանջերը նարնջի, ջրերը շառաչուն, երկինքները կապուտակ... Այստեղ մեր կարոտն է, իսկ կարոտից վեր չկա ոչինչ»:

Գր. Գուրզադյանի աշխատանքները մոտավորապես 40-50 տարվա պատմություն ունեն և մինչև վերջերս, ինչպես հավաստում է Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն, գեղանկարիչ **Փարավոն Միրզոյանը**, «դուրս չէին եկել արվեստանոցի պատերից, մինչդեռ այս մեծ մարդու արվեստը տեսանելի պիտի լինի ժողովրդին: Ուստի որոշեցինք կազմակերպել

Գուրզադյանի աշխատանքների ցուցահանդեսը»: Մինչ Վանաձոր գալը աշխատանքները ցուցադրվել են նախ՝ մայրաքաղաքում, ապա՝ Էջմիածնում:

Գրիգոր Գուրզադյանի արվեստը շարունակում է սարյանական դպրոցի ավանդույթները: Նրա բոլոր կտավներում իշխում է զարմանալի ու նուրբ քնարականությունը: Աստղաֆիզիկոսը խոստովանում է, որ մեկ անգամ մոտենալով՝ սկ-



տում-վերջացնում է նկարը, և թերևս այս պատճառով, որ «իմ նկարներում հանդիպում են նաև վրձին չկապած տեղեր»: Նշում է, որ իրեն տրամադրություն է պետք, ներքին խանդավառությունը, ճիշդ. «Նկարում եմ սաստիկ արագ, բայց մտածում եմ տարիներով: Այդպես եղել է նաև Ջերմուկի ձորը նկարելիս: Շուրջ երեք տարի առանց վրձին գնում էի, դիտում բնության այդ զարմանալի հրաշքը և վերադառնում, և գիտե՞ք՝ լուծումը ծնվեց ընդամենը մի ակընթաթյունով: Կարևորը գտնելն է՝ ինչ է իմ տեսածը, ինչ աշխարհ է, հետո նոր՝ ինչպես պետք է այն ներկայացնել»:

Նկարում է փոքրուց, աշակերտել է գտնում է հոգևոր այդ մտերմությունը. Մարիամ Ասլամազյանին: Հայաստանի նկարիչների միության անդամ է: Նաև գրում է. գրողների միության անդամ է: Ասում է. «Ես ամենաբախտալուստի պայծառությամբ: Իսկ կտավների վրա մարդն եմ: Չհասկացա՝ ինչպես սկսվեց գրելը, ինչպես՝ նկարելը... Ե՛վ աստղաֆիզիկական, և՛ գեղանկարչությունը, և՛ գրականությունը խիստ տարողունակ են, հետաքրքիր՝ խենթանալու աստիճանի...»:

Գր. Գուրզադյանն ասում է. «Մանկուց կորցրել եմ լսողությունս: Ոչինչ չեմ լսել ո՛չ դպրոցում, ո՛չ բարձրագույնում... բայց իմ աշխարհը եղել է

երաժշտությունը: Նկարելիս երգում եմ, երաժշտական սիմֆոնիաներ են զալխագնում մեջս: Երաժշտություն չեմ գրել, Նշում է, որ իրեն տրամադրություն է որովհետև նոտաները չգիտեմ... Համալսարանում դասախոսությունների ժամանակ ներքուստ երգում էի, պարզվում է, որ ֆանտաստիկ լսողություն ունեցող նոտաներ եմ ունեցել, ովքեր լսել են երաժշտությունը:

Կարոտից ու երաժշտությունից վեր ես ոչինչ չգիտեմ»:

Թվում է՝ հոգևոր մտերմություն է փնտրում «երկնային ծաղիկների» աստղերի, աստվածների ու երկրայինների՝ կապիչների միջև: Փնտրում ու անկասկած Գուրզադյանի գեղանկարչական աշխատանքները շնչում են աստղերից ու կապիչներից ճառագող լույսով ու զարմանալի պայծառությամբ: Իսկ կտավների տիեզերական կապույտն ու ծիածանի բուսկավեց գրելը, ինչպես՝ նկարելը... Ե՛վ լոր գույների և երանգների հիասքանչ արտացոլումը աստղաֆիզիկոս-գեղանկարչի գաղտնիքն են. «Նա տիեզերական շունչն է, տրամադրությունը, խանդավառությունը... Միտքս աստղերի վրա է, բայց վրձինը գործում է...»:

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՆՍԱԿՆՈՎ ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆԻՆ

2006 թ. հոկտեմբերի 14-ին Վանաձորի քաղաքապետարանի դահլիճում տեղի ունեցավ միջոցառում, որին հրավիրված էին ներկայացուցիչներ տարբեր բնագավառներից: Այն կազմակերպվել էր նախաձեռնությամբ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության: Ծրագիրը ֆինանսավորվել էր ՄԱԿ-ի՝ բնակչության հիմնադրամի կողմից: Միջոցառումն արտասովոր էր իր նորոգության: Առանձին սեղանների շուրջ խմբված էին տարբեր տարիքի և սեռի ներկայացուցիչներ, որոնք սեղանավարների օգնությամբ քննարկում էին Հայաստանում առկա մի շարք հիմնական դերեր՝ մասնավորաբար ծնելիությանը, հիվանդության և մահացության ցուցանիշներին, ամուսնության և ամուսնալուծության հարաբերակցությանը, սեռատարիքային համամասնությանը, բնակչության ծերացմանը, ինչպես նաև ներգաղթին ու արտագաղթին վերաբերող:

Յուրաքանչյուր սեղանի մոտ քննարկման ընթացքում առաջարկված մտքերը, ուղղված հիմնականում էին լուծմանը, ամփոփ արձանագրվում էին հատուկ գրառումների կողմից շարժական համակարգի միջոցով: Բոլորին տեսանելի լինելու նպատակով կատարված գրառումներն անմիջապես հայտնվում էին երկու մեծ էկրաններին: Վանաձորում կատարվել էր մոտ 350 առաջարկ, որոնք, նախապես մշակվելով, Կառավարությանը և Ազգային ժողովին ներկայացվելու են նախ՝ որպես հայեցակարգ, ապա՝ որպես օրենքի նախագիծ: Այս ամենի նպատակը երկրում կառավարման համակարգի բարելավումն է՝ հաշվի առնելով հասարակական կարծիքը՝ նրանում առկա խնդիրների արձանագրությամբ: Նմանատիպ միջոցառումներ նախատեսված են Հայաստանի շրջաններում, որոնցով հնարավոր կդառնա ստանալ ժողովրդին մտահոգող հարցերի ամբողջական և ճշգրիտ պատկերը, որը թերևս, նպաստի դժվար խնդիրների լուծմանը:

Հարցերին պատասխանում է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի գործադիր տնօրեն Թևան Պողոսյանը

Ի՞նչն առիթ եղավ նման նախաձեռնության համար:

1998 թ. ՀՀ սոցիալական հարցերի նախարարությունը նախաձեռնեց մշակել ժողովրդագրական զարգացման հայեցակարգ: Հայաստանում գոյություն ունի նաև ՄԱԿ-ի «Բնակչության հիմնադրամ» ծրագիր, որը զբաղվում է առողջապահական խնդիրներով, մասնավորաբար՝ կանանց, երեխաների առողջության հարցերով: Այս հայեցակարգի զարգացման ծրագրերի ֆինանսավորումը կատարվում է նրանց կողմից: Մարդկային զարգացման միջազգային կենտրոնն էլ իր հերթին մշակել էր հասարակության մեջ առկա հիմնական խնդիրներից մի քանիսի քննարկման ուղիները: Քանի որ 2 մարմինների նպատակն էլ մեկ էր՝ վեր հանել բնակչությանը մտահոգող հարցերը և հենց նրանց օգնությամբ լուծումներ գտնել, ուստի որոշեցինք միավորվել և մեր ներդրումն ունենալ մեր երկրի ապագայի բարելավման գործում:

Ի՞նչ է նախատեսվում անել այս հավաքած մտքերը. արդյո՞ք պիտի մնան թղթի վրա:

Սեպտեմբերի սկզբին Կառավարությունը հաստատեց հայեցակարգը: Միջոցառումների այս ծրագիրը կշարունակվի մինչև 2006 թ. նոյեմբերի 6-ը, որին ներգրավված են Իջևանը, Վանաձորը, Եղեգնաձորը և Երևանը: Մենք փորձել ենք քննարկումներ անցկացնել տարբեր շրջաններում, որպեսզի հնարավոր լինի ներառել բոլոր շրջաններում առկա խնդիրները՝ հասարակության բոլոր շերտերին վերաբերող: Ուրախալին այն է, որ Իջևանի քննարկումների շնորհիվ Կառավարու-

թյունն արդեն փոփոխություններ է մտցրել իր հայեցակարգում: Վանաձորում հնչեց մոտ 350 միտք տարբեր մարդկանց շուրթերից: Այդ մտքերը կարող են նույնիսկ մի քանի տասնյակ վերամշակումներով անցնել, ձևավորվելով սկզբում՝ որպես հայեցակարգ, ապա՝ որպես օրենք և կիրառվել գործնականում:

Որքա՞ն ժամանակ կլինի առաջարկներ անել, և ինչպե՞ս կարելի է դրանք հասցնել պատկան մարմիններին:

Եթե առաջարկներն արվեն առաջիկայում, ավելի լավ, բայց դրանք կարող են արվել նույնիսկ այն դեպքում, երբ եղած առաջարկությունները՝ որպես օրինագիծ, քննարկվեն Ազգային ժողովում կամ ընդունվելիս լինեն հաջորդաբար՝ առաջին, երկրորդ կամ երրորդ ընթերցմամբ: Այս միջոցառումը դեռ օրենքի հայեցակարգային մակարդակն է ապահովում, բայց եթե այս առաջարկները ճիշտ ուղու վրա դնենք, վաղը կունենանք ճիշտ օրենքներ: Դրա համար շատ կարևոր է, որ ժողովրդի կարծիքն ի մի բերվի և որպես նախագիծ հասնի Կառավարությանն ու Ազգային ժողովին:

Հնարավոր է, որ առաջիկայում էլ նման միջոցառում կազմակերպվի:

Նոր նախաձեռնության մասին այսօր վաղ է խոսելը, քանի որ արդեն առաջարկները մեզ համար հսկայական պաշար են, և նախ անհրաժեշտ է եղածը կյանքի կոչել: Այդ առումով մենք շատ անելիքներ ունենք:

Հարցազրույցը՝ սեփական թղթակցի

ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Քրիստոնեական վաղեմի սովորություն կա՝ որևէ դժվար գործ կատարելիս մատաղ խոստանալ՝ այն հաջողությամբ ավարտին հասցնելու նպատակով, կամ մատաղ անելով գոհանալ Աստծուց, երբ ազատվում ենք որևէ փորձանքից:

Ըստ Հին Կտակարանի՝ սովորություն կար Աստծուն գոհություն հայտնել՝ կենդանիներ գոհելով: Քրիստոսից հետո, սակայն, գոհաբերությանը փոխարինելու եկավ մատաղը: Սա հոգևոր-բարեպաշտական արարողություն է, որի ժամանակ մորթվող կենդանին՝ աղավաղված, աքաղաղ կամ գառը, որը պիտի արու լինի և անարատ, եփվում է քահանայի օրհնած աղով: Կենդանու կտուցի կամ բերանի մեջ օրհնված աղ է լցվում, որպեսզի մատաղացուն դադարի գուտ մսացու լինելուց, սրբագործվի և եփված վիճակում

Տիրոջը, քանի որ կատարվել էր սոցիալական քարտեռի չարիքից ժողովրդին ազատելու իրենց խնդրանքը: Սբ Աստվածածին եկեղեցում պատարագիչ Տեր Վահան քահանա Ազարյանը օրվա խորհրդի քարոզի ընթացքում ողջույնի, քաջալերանքի ջերմ խոսք ու իր օրհնությունն ուղղեց առանձնապես ուխտավորներին և հորդորեց նրանց առավել ամուր լինել հավատքի մեջ:

Մեծ էր ժողովրդի ուրախությունը, մանավանդ նրանց, ովքեր շուրջ երեք տարի կենաց-մահու կռիվ էին մղել չարի դեմ ու տառապալից մտահոգությամբ հետևել դատավարությունների ընթացքին: Ամենը ցնծության մեջ էին: Գոհությամբ վայելում էին բաշխվող մատաղն ու հոգևոր երգերով ու աղոթքներով փառաբանում տիեզերքի Արարչին:

Օրվա վերջում ուխտավորներն այցելեցին նաև ՀՍԻԿ Մարդու իրա-



բաշխվի ժողովրդին, մանավանդ կարիքավորներին ու հիվանդներին, քանի որ նպատակը ողորմությունն է՝ ըստ այն խոսքի, թե՛ դու թող հիվանդանաս՝ ըստ քո աղքատության, և Տերը կթողի քեզ բյուր քանքար՝ ըստ իր հարստության: Սա նախ և առաջ վերաբերում է ներելու կարողությանը և ըստ այդմ էլ՝ սեփական մեղքերի թողությանը:

Այսպես՝ եփված կերակուրը բաշխելով՝ ուխտավորն իր գոհությունն է հայտնում Տիրոջը և կատարում խոստումը նրա առջև, քանի որ ուխտ անել՝ նշանակում է պայման կապել: Չէ՞ որ սարսափելի բան է ուխտադրությունը, նույնիսկ եթե մարդկանց հետ են պայմանավորվել, էլ ո՛ր մասը՝ Աստծուն խոստանալիս:

Նման Աստվածածին նպատակով 2006 թ. նոյեմբերի 5-ին Երևանից, Էջմիածնից և մերձակա այլ բնակավայրերից Վանաձոր էին ժամանել շուրջ 50 ուխտավորներ: Նրանք այցելեցին քաղաքի երեք՝ Սբ Նարեկ, Սբ Աստվածածին և Սբ Սարգիս եկեղեցիները և երեք գառների մատաղով գոհություն հայտնեցին

վունքների գրադարան և գրասենյակ, ծանոթացան կազմակերպության գործունեությանը և ծրագրերին: Ուխտավորները գեղեցիկ, հոգևոր բովանդակությամբ ընծաներ հանձնեցին Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի հոգևոր հայրերին և ՀՍԻԿ իրավապաշտպաններին: Նրանք ՀՍԻԿ-ին հանձնեցին գեղեցիկ ձևավորած շնորհակալագիր, որում մասնավորապես ասվում է.

«Մեր խորին երախտագրությամբ կատարված ինչպիսիք... ողջ անչնակալվին՝ ցուցաբերած մարդկային, արդարացի վերաբերմանը և անշահախնդրի ազակության համար: Քաղաքի մարտի, որ մեր ժամանակներում ընդունվել է որպես պայմանավորված, էլ ո՛ր մասը՝ Աստծուն ունի պայմանելու արդարությունն ու արդարությունը, վերականգնելու հույսն ու լավարկությունը, ներշնչելու ուժ և հավաք պայքարելու հանուն ամենամիտքային և սուրբ ընթացքների»:

ՆԱԻՐԱ ԴԵՊՈՒՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ ընթերցողներ, այսուհետ յուրաքանչյուր ամսվա առաջին ուրբաթ օրը՝ ժամը 15.00-ին, Վանաձորի Մարդու իրավունքների գրադարանը կկազմակերպի թեմատիկ ֆիլմերի դիտում: Միտք կհրավիրում ենք Ձեզ և ակնկալում Ձեր եռանդուն մասնակցությունը:

Հրատարակության Բ տարի
Հիմնադիր և հրատարակիչ
Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՀՀ, 2002 թ. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Դեռ.՝ (+374 322) 2-29-87
Ֆաքս՝ (+374 322) 4-47-81
Էլ. փոստ՝ lc@acrpc.am Համացանցի էջ՝ www.acrpc.am

Գլխավոր խմբագիր՝ Դավիթ ԳՅՈՒԼՍՏՅԱՆ
Խմբագիր՝ Նաիրա ԴԵՊՈՒՅԱՆ
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթին» պարտադիր է:
Թերթի սույն համարը տպագրվում է ՄԱԶԾ «Աջակցություն քաղաքացիական հասարակության հավակնույթին» նախաձեռնություններին՝ ծրագրի շրջանակներում:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության
2006 թ. դեկտեմբերի 27:
Տպաքանակը՝ 500:
Տպագրվում է «Չանգակ-97»
հրատարակչատանը:
Իրավական մշակույթ
Legal Culture
Правовая культура